

891.71.092 [unclear]  
7- - 40

Վ. ԴԵՍՆԻՑԿԻ

ՍՏՈՒԳԱՍՏ Է 1961 թ.

# ՊՈՒՇԿԻՆԸ ՅԵՎ ՄԵՆԲ

~~1006~~  
I  
A 5024

Թարգմ. ՀՄ. ՏԱՐԱԽՉՑԱՆ



Գ Ե Տ Դ Բ Ա Տ

Յ Ե Ր Է Մ Կ

1 9 8 7

THE UNIVERSITY OF CHICAGO

1917:000

000



## I

Համարյա հարյուր տարի սրանից առաջ Վ. Գ. Բե-  
լինսկին, իրեն հատուկ պատմական մտածողության  
շնորհիվ, հարկավոր համարեց սահմանափակորեն վո-  
րոշելու գեղարվեստական չերկերի իր տված գնահա-  
տումների սոցիալական կարևորությունը: Նա Պուշկի-  
նի մասին գրել է. «Պուշկինը պատկանում է մշտա-  
պես ասլորդ և շարժվող յերևույթներին, վոր չեն կանգ-  
նում այն կետի վրա, վորտեղ մահը նրանց վրա յե  
հասել, այլ շարունակում են հասարակութչան գիտակ-  
ցութչան մեջ դարգանալ: Յուրաքանչյուր դարաշրջան  
նրանց մասին իր դատողութչունն է տալիս, և վոր-  
քան ել վոր նրանց ճիշտ հասկացած լինի, միշտ ել  
իրեն հաջորդող դարաշրջանին կթողնի վորևե նոր և  
ավելի ճիշտ բան ասելու, և դարաշրջաններից վոչ  
մեկն ել յերբեք ամեն ինչ չի արտահայտի»:

Մեր որերում, անցյալի բոլոր արժեքների վերա-  
գնահատութչան պայմաններում, Բելինսկու այս խոս-  
քերը մեզ համար ել ավելի համոզեցուցիչ են, քան  
թե մեծ քննադատի ժամանակակիցների համար: Ճիշտ  
է, «հասարակութչան գիտակցութչուն», «դարաշրջան»  
հասկացողութչունների մեջ մենք այլ բովանդակու-  
թյուն ենք դնում, քան թե Բելինսկին: Բայց դրա-  
նով Բելինսկու դատողութչունների ճշմարտութչունը  
չի ժխտվում, այլ միայն ճշտվում և ուժեղացվում է:



Պատմութեան ասպարեզ յելնող յուրաքանչյուր հասարակական նոր դասակարգ աշխարհ ե բերում նոր «գիտակցութիւն», և այդ նոր գիտակցութեան լույսով անցյալ դարաշրջանների կուլտուրական արժեքներն սկսում են նոր ձևով ապրել, կամ մեռնում են:

Հոկտեմբերյան մեծ որերի նախորջակին բուրժուական բոլոր յիրանգների մամուլը՝ լրագրերում, ժուռնալներում, բրոշյուրներում, գրքերում՝ կոչ եր անում գալիք վտանգից պաշտպանելու կուլտուրան: Նա կոչ են անում միանալ պաշքարելու հեղափոխական պրոլետարիատի դեմ բոլոր նրանց, ում համար թանգ են մտրդկալին հանճարի ստեղծագործութիւնները, ով սիրով ե դիտում հեռավոր դարաշրջանների արվեստի հուշարձանները, ով կարողանում ե վայելել խոսքի, վրձինի, հատիչի մեծագույն վարպետների սքանչելի ստեղծագործութիւնները:

Յերեկվա ստրուկը, «ըմբոստացած գյաղան», — հեղափոխական բանվորներն ու գյուղացիները, — գրում եյին բուրժուական հրապարակախոսները, գործ չունի վողու «համամարդկային», «հավիտենական» արժեքների հետ. պրոլետարիատն իր դասակարգային պայքարում յեսասեր ե, նա պաշքարում ե միայն հանուն իր տարրական նյութական պահանջների բավարարման:

Բանվոր դասակարգն արժանիորեն գնահատեց այդ վայնասունը կուլտուրայի կործանման մասին: Դրանց իմաստն այժմ հրաշալի հասկանում են նաև կապիտալիստական յերկրների հեղափոխական բանվորները ե Արևմտյան Յեվրոպայի ու Ամերիկայի ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչները, վորոնց համար,



իրոք, թանգ են մարդկային հանճարի իսկապես ար-  
ժեքավոր նվաճումները: Նրանք տեսան իսկական գյա-  
դային, կուլտուրայի թշնամուն, վորը գրքեր ե այ-  
բում, փակում ե համալսարաններն ու լաբարատորիա-  
ները, հրաժարվում ե նախնիքների ժառանգությու-  
նից: Այդ թշնամին, մեր որերի «գյադան» բուրժուան  
ե, «կուլտուրայի» տերը կապիտալիստական յերկրնե-  
րում: Հանուն մարդու ձեռքով մարդու կապիտալիս-  
տական շահագործման հիմունքների խարուսիկ յերաշ-  
խիքների բուրժուազիան կազմակերպում ե Փաշխտա-  
կան դիկտատուրա: Վախեցած առաջին պրոլետարա-  
կան պետության հղորության ամրացմամբ, պրոլե-  
տարիատի հեղափոխական ույժերի աճմամբ ամբողջ  
աշխարհում, նա պատուում ե յերիտասարդ և համար-  
ձակ բուրժուազիայի արյամբ յերգեմն վողողված «ա-  
զատությունների խարտիաները», «մարդու և քաղա-  
քացու իրավունքների դեկլարացիան», հրաժարվում  
ե այն մեծ մտածողներից, արվեստագետներից, վո-  
րոնցով դեռ ևս յերեկ նա հպարտանում եր:

Յերբ ոռուսական բուրժուական ինտելիգենցիան  
Հոկտեմբերյան հեղափոխության նախորչակին իր վաչ-  
նասունով ոգն եր թնդացնում կուլտուրայի գալիք  
մայրամուտի մասին, ապա ի թիվս ոռու մեծ անուն-  
ների, վորոնց «բարբարոսներին» հաղթանակն սպառ-  
նում եր մոռացությամբ, նա ամենից առաջ Պուշկինի  
անունն եր տալիս:

Այսպես 1921 թ. Պուշկինի 84-ամյակին, բանաս-  
տեղծ Վ. Սոդասևիչը, այժմս վտարանդի, հիշելով  
«Պուշկինի արևի առաջին խավարումը» (Պիսարևի վե-  
րաբերմունքը դեպի Պուշկինը), գուշակում ե յերկ-



բորդը. «Նա այդ կերպ չի արտահայտվի: Պուշկինին վոչ կծաղրեն, վոչ ել կվիրավորեն: Բայց սպասվում ե, վոր կսառչեն դեպի նա: Արդեն այդ մարդիկ, վորոնք Պուշկինին չեն տեսնում, ներթափանցել են մեր մեջ: Արդեն նրանցից շատերը Պուշկինին չեն լսում, ինչպես վոր մենք ենք նրան լսում, վորովհետև այս վերջին վեց տարիների Թնդյուններից նրանց ականջները ծանրացել են»: «Պատմությունն ընդհանրապես անհրապույր ե» — անսպասելիորեն խոստովանում ե Պուշկինի դառնացած «սլաշտպանը» ե, բացատրելով «Պուշկինի մահվան որը համաժողովրդական տոն դարձնելու» իր ցանկությունը, նա հաշտարարում ե. «Սրանով մենք պաշտանավորվում ենք, թե մենք ինչ անունով պիտի իրար ձայնենք, մենք ինչպես պետք ե ձայն տանք միմյանց վերահաս խավարում»:

Գուցե Վ. Սողասեկիչը վորոշ չափով մարգարեացավ, գուցե հիմա ել վոմանք Պուշկինի անունով վորձում եմ «ձայնել», բայց Պուշկինի անվան համար «անհրապույր պատմությունից» նրանք այդ իրավունքը չստացան:

Հեղափոխական պրոլետարիատը սոցիալիստական կուլտուրան դատարկ տեղում չի կառուցում: «Պրոլետարական կուլտուրան, — ասում ե Լենինը, — պետք ե հանդիսանա որինաչափ դարգացումն գիտելիքների այն պաշարի, վոր մարդկությունը մշակել ե կապիտալիստական հասարակության, կալվածատիրական հասարակության, չինովնիկական հասարակության ճնշման տակ»: «Կոմունիստ կարելի ե դառնալ միայն այն ժամանակ, յերբ հիշողությունդ կհարստացնես այն բոլոր հարստությունների գիտությամբ, վոր մշակել ե



մարդկությունը» (Ленин, Соч., т. XXV, стр. 387, 388): Այս կլասիկ ձևակերպումն է գտնվում նաև դեպի անցյալ դարաշրջանների արվեստն ունեցած մեր վերաբերմունքի հիմքում:

Ինքնըստինքյան հասկանալի չէ, Վոր անցյալի դեղագիտական արժեքների քննադատական յուրացման պրոցեսում ֆեոդալական և բուրժուական հասարակության մտքերի շատ իշխողներին «յեռոտանիններ» են «տատանվել», շատ «աստվածներ» են տապալվել իրենց պատվանդաններից: Բայց Պուշկինին այդպիսի ճակատագիր չէր սպառնում և չի սպառնում: Դեռ ավելին. միայն մեր որերում կարող է իրագործվել Պուշկինի յերազը, Վոր նա արտահայտեց իր մահվանից մի փոքր առաջ.

Համբալն իմ Ռուսիայում անծայրածիր՝ կտարածվի,  
Ինձ կհիշի յուրաքանչյուր լեզու այնտեղ ապրող՝  
Մլավոնի թող սեզ ու ֆինն ու դեռ այսօր վայրի  
Տունդուար և կալմիկն ըստեպ սիրող: (Թարգմ. Ն. Զարյան)

Միայն պրոլետարական հեղափոխությունն էր, Վոր կուլտուրային հաղորդակից դարձրեց և «տունդուարին», և «կալմիկին», և տասնյակ ուրիշ ազգությունների, Վորոնք կապիտալիստական հասարակության մեջ միայն շահագործման և ստրկացման «կուլտուրան» եյին ճանաչում: Միայն պրոլետարական հեղափոխությունը ավեց նրանց նաև Պուշկինին, և այն ել նրանց մայրենի լեզվով: Արդեն 1919 թ. տնտեսական քայքայման և քաղաքացիական պատերազմի որերին Պուշկինի յերկերը տպագրվեցին 725.000 որին նակ: 1934 թ. Պուշկինի գրքերի տիրաժը հասավ



1.119 600 որինակի: Հեղափոխութեան տարիներին յույս տեսան Պուշկինի (յերկերի բաղմաթիւ հրատարակութեաններ ՆՍՀՄ-ի տարբեր լեզուներով՝ ուկրայիներեն, բելոռուսերեն, հրեաներեն, վրացերեն, հայերեն, ուզբեկերեն, թաթարերեն, մոլդավերեն, լեռնային-մարիերեն, դաշտային-մարիերեն, գնչուերեն և ուրիշ լեզուներով: Հեղափոխութեան տարիներին ընթացքում Պուշկինը դառել է բանվորների և կոլտնտեսական—գյուղացիների բաղմամիլիոն մասսաների սիրելի հեղինակներից մեկը: Պուշկինյան յերկի յուրաքանչյուր որինակը մեր յերկրում տասնյակ և հարյուրավոր ընթերցողներ ունի: Վոչ, Պուշկինի «Եւոտանին չի տատանված», «Կուլտուրայի» բուրժուական սլաշտպանների վախը կեղծ է և սուտ: Յեւ Պուշկինի վողբերգական մահվան հարյուրամյա հորելյանը մեր յերկրում կհանդիսանա մեծ բանաստեղծի մի այնպիսի լաչն համաժողովրդական, իսկապես «ազգային» տոնակատարութեան, վորով նրան յերբեք չեր կարող մեծարել բուրժուա-ազնվական Ռուսաստանը, վորովհետև նրա Պուշկինը բանաստեղծ եր հազարների համար, իսկ մեր Պուշկինը միլիոնների բանաստեղծն է:

## II

Յեթե Գոգոլի ժառանգութեան իմաստավորման գործում բուրժուական գիտութեանը միաբան չեր, յեթե բուրժուական միտքը հաճախ չեր համարձակվում Գոգոլին ամբողջովին մտցնել իր կուլտուրայի սրբութեան սրբոցի մեջ, ապա այլ եր Պուշկինի նկատմամբ: Պուշկինի բանաստեղծական ժառանգութեան



հայտարարված եր ազգային սեփականութուն. ազգային գրականության զարգացման գիծը բուրժուական գիտությունը Պուշկինից եր սկսում: Պուշկինի բանաստեղծական պատգամները,—սերունդների միջանց հաջորդելու մեջ,—մեկնաբանվում էյին վորպես ռուսական ժողովրդական «վոզուն», իրականության ռուսական ըմբռման, ռուսական ազգային իդեալների լիարժեք և ընդհանուրի կողմից ճանաչված արտահայտություններ:

1859 թ. Ապ. Իրիգորևը Պուշկինի մասին գրել է. «Պուշկինը մեր ամեն ինչն է. Պուշկինը ներկայացուցիչն է մեր այն ամենի, ինչ վոր սրտահույզ է, առանձնահատուկ, այնպիսին, վոր ոտար, ուրիշ աշխարհի հետ բոլոր ընդհարումներից հետո էլ մնում է մեր սրտահույզը, առանձնահատուկը: Պուշկինը մեր ժողովրդական անհասականության դեռ ևս միակ լրիվ աղնարկն է... լրիվ և ամբողջական, բայց դեռ ևս մեր ժողովրդական էյության վոչ թե գույներով, այլ միայն կոնտուրներով գծված պատկերը... Պուշկինի հոգեկան համակրությունների վոլորտը չի բացասում վոչինչ, վոր յեղել է նրանից առաջ, և վոչինչ, վոր չեղել է նրանից հետո, և վոչինչ, վոր կլինի ճիշտ և որպանապես մերը:

... Պուշկինի մեծ բնավորության մեջ, վոր վոչինչ չի բացասում... բնավորության, վոր արձագանքել է ամեն ինչի, բայց արձագանքել է ռուսական հոգու չափով,—պարունակում է մեր բոլոր այժմյան, ըստ չերեույթին, այնքան չերկատված համակրանքների արդարացումն ու հաշտեցումը» («Взгляд на русскую литературу после Пушкина»):



Պուշկինի պոեզիայի ազգային «ամեն ինչ հաշտեցնող» իմաստի այսպիսի հաստատման ուղղութեամբ երբնթանում բուրժուական մտքի աշխատանքը ամբողջ XIX դ. և XX դ. սկզբում:

Ֆ. Դոստոևսկու համար, վոր 1880 թ. Պուշկինի Մոսկվայի արձանի բացման իր ճառում հիմնականում կրկնեց Սպ. Գրիգորի գրութիւնները, — Պուշկինը «կատարելապես ժողովրդական բանաստեղծ է», բանաստեղծ «համաշխարհային զգայնութեամբ», ըստ վորում հենց այդ «զգայնութեան մեջ արտահայտվեց նրա ամենամեծ ազգային ուսուցանան ուձը, արտահայտվեց նրա պոեզիայի հենց ժողովրդականութեանը, ժողովրդականութեանը իր հետագա զարգացման մեջ, ժողովրդականութեանը մեր ապագայի, վոր թագնված է ներկայի մեջ, և արտահայտվեց մարդարեւար»:

Յեթե Պոլեոյի համար 1837 թ., բանաստեղծի մասնակից չերկու շարաթ հետո, Պուշկինը միայն «մասնակի հանճար է», «մեծ լիբիքական բանաստեղծ և իր ժամանակակից հայրենիքի լիակատար ներկայացուցիչ», յեթե նրա համար հնարավոր չե Պուշկինի անվան համեմատութեանը Հոմերոսի, Դանտեյի, Շեքսպիրի անունների հետ («Պուշկինը չեր պատկանում... դարավոր հանճարներին, վորոնց յերեան գալն աշխարհում ավելի ու ավելի հազվադեպ է դառնում»), ապա XIX դ. վերջին և XX դ. սկզբի բուրժուական գիտութեան համար Պուշկինի հարարերակցութեանը Դանտեյի, Շեքսպիրի, Գյոթեյի անունների հետ դառնում է սովորական և որինաչափ ճիշտ է, այդ ել վոչ միշտ, ըստ Դոստոևսկու, Պուշկինի «համաշխարհայնութեան» հաստատելու համար, այլ հաստատելու



ուղղությամբ այն, վոր ուս ազգային գրականութեան զարգացման համար Պուշկինը նույնպիսի վճռական նշանակութիւն ունեցավ, ինչ վոր համաշխարհային հանճարի այդ բանաստեղծներն իրենց ազգային գրականութիւններէ համար:

Այսպիսով, Պուշկինի անվան շուրջն ստեղծվում է «ազգային հոգու» հիմնական հատկութիւնների կրողի և արտահայտչի յուրատեսակ աստվածացման մթնոլորտ: Նախահեղափոխական Ռուսաստանի իշխող դասակարգերի կուլտուրականութեան մակարդակի չափով Պուշկինին շատ են ուսումնասիրում, հրատարակում, նրանով «գաստիարակում են» աճող սերունդը: Ստեղծվում է Պուշկինի՝ մարդու և բանաստեղծի, Պուշկինի՝ կյանքի ուսուցչի յուրատեսակ պաշտամունք: Բուրժուական Ռուսաստանը, ինչպես Իտալիան՝ Գանտեսի, Գերմանիան՝ Գյոթեյի, Անգլիան՝ Շեքսպիրի համար,— սկսում է,— ճիշտ է, վոչ շատ առատորեն—արձաններ կանգնեցնել, ձոնում է նրան յերկերի «ակադեմիական» հրատարակութիւն, վորը ճիշտ է, տասնյակ տարիներ ընթացքում սկզբից այն կողմ չանցավ, մի քանի հատորներից դենը չանցավ. Պուշկինի կյանքն ու ստեղծագործութիւնն ուսումնասիրելու համար ստեղծվում են ընկերութիւններ և խմբակներ, նույնիսկ՝ «կանանց» ընկերութիւն, կազմակերպվում է հատուկ «ակադեմիական» հրատարակչութիւն, նվիրված նրա կյանքի և ստեղծագործութեան ուսումնասիրութեանը («Պուշկինը և նրա ժամանակակիցները»), ստեղծվում է Պուշկինյան տուն-թանգարան և այլն: Կարճ ասած, Պուշկինը բուրժուական ձևով, «յեւրոպական ձևով», մտնում է ուսական «ազգային կուլտուրայի», «ուսական կյանքի մեջ»:



Պիտարևի փորձը 60-ական թվականներին «տատա-  
նելու» Պուշկինի «յեռոտանին» դատասպարտվեց վոր-  
պես «խլեստակովյան սանձարձակութուն» առանց ցան-  
կանալու ըմբռնել Ֆեոդալական-բուրժուական գեղա-  
գիտության դեմ ուղղված պայքարի դասակարգային  
իմաստը: Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի՝ հեղափոխա-  
կան դեմոկրատիայի այդ առաջնորդների վերաբերմուն-  
քը դեպի Պուշկինը, իհարկե, բոլորովին այլ էր, քան  
Պիտարևինը:

Մենք հիմա չենք կարող Պուշկինի անվան շուրջը  
տարվող դարավոր բարդ պայքարի տարբեր մոմենտ-  
ների պարզաբանման վրա կանգ առնել, բայց մեզ հա-  
մար վոչ մի կասկած չկա, վոր նախահեղափոխական  
Ռուսաստանում պուշկինյան «պաշտամունք» ստեղծե-  
լու պրոցեսը դասակարգային պայքարի պրոցես է,  
վոր՝ ազգային բանաստեղծ Պուշկին՝ տերմինը բովան-  
դակությամբ լցնելն ընթանում էր նույն դասակար-  
գային պայքարի տրամադրությունների նշանի և ներ-  
գործության տակ:

Յուրյց տալու համար, թե «ազգային բանաստեղծ»  
հասկացողության մեջ հաճախ ինչ բովանդակություն  
են դնում, բերենք մի որինակ: 1891 թ. գիմնադրա-  
ներից մեկում Պուշկինի հիշատակին նվիրված տոնին  
արտասանած հանդիսավոր ճառում աշակերտներին հե-  
տեվյալ ճշմարտություններն էյին հաղորդվում. «Պուշ-  
կինի քաղաքական կառուցվածքի իդեալն է ազատա-  
կամ հավատարմություն պարտականության նկատ-  
մամբ ցածրում, բայց վողորմած հզորություն վերևում...  
Պուշկինն համոզված էր, վոր մեր ազգային ընափո-  
րության, մեր ազգության հիմքը ուղղափառությունն  
է, վոր մեր պատմությունը, հեռեւոր, և մեր լու-



սովորությունը մենք պարտական ենք վանականներին» և այլն:

Համենայն դեպս Պուշկինին յղգային բանաստեղծ ընդունելը մի դրդապատճառ եր նրա կյանքն ու ստեղծագործությունն ուսումնասիրելու համար: Վոչ մի կերպ չցանկանալով չափազանցացնել բուրժուական գիտության ծառայությունները, մենք այնուամենայնիվ պետք է ընդունենք, վոր նա թե պուշկինյան ժառանգությունը յերևան հանելու և թե այն սիստեմավորելու համար քիչ բան չի արել: Մեծ ուշադրութուններ նվիրված Պուշկինի կենսագրության ուսումնասիրությանը, ինչպես նաև նրա յերկերի գեղագիտական կարևորության պարզաբանելուն: Ճիշտ է մեծ ուշադրութուն նվիրելով Պուշկինի կյանքի մասնավոր և նվազ կարևոր հարցերին, պուշկինիստ-կենսագրերը բանաստեղծի ճակատագիրն ուսումնասիրելիս չեյին համարձակվում և չեյին կարող բարձրանալ մինչև սոցիալական կարգի ընդհանրացումները, թողնելով մինչեվ վերջը չհետադուրսված կամ չլուսաբանված Պուշկինի կենսագրության մի շարք կարևորագույն հարցեր: Մտքի նույն վարանոտությունն ու սահմանափակվածությունն ելին բնորոշում բուրժուական գիտությունը նաև Պուշկինի ժառանգության կուլտուրապատմական իմաստն ու նշանակությունը դրսևորելու գործում: Փոփոխվող սոցիալական հարաբերությունների պայմաններում զանազան ձևերով շարունակելով հիմնում եյին Բելինսկու, Ապ. Գրիգորևի, Պ. Աննենկովի, Դոստոևսկու գատողությունները Պուշկինի պոեզիայի գեղագիտական և բարոյական արժեքի մասին: Ինչպես ել վոր լինի, բուրժուական պուշկինիանա-



յում խորհրդային գիտությունը պատկանելի ժառանգությունն ստացավ:

Ի տարբերություն հին բուրժուական գրականագիտության խորհրդային պուշկինագիտությունը նոր մեթոդաբանական դիրքերից ձեռնամուխ լինելով Պուշկինի իդեոլոգիայի և ստեղծագործության ուսումնասիրությանը, առաջ մղեց մի շարք մեծ պրոբլեմների մշակումը:

Պուշկինի մասին յեղած խորհրդային գիտության գրական նվաճումներին և վերաբերում այն հսկայական աշխատանքը, վոր կատարված և Պուշկինի յերկերի ճիշտ տեքստը վորոշելու գծով: Յեթե այդ աշխատանքը դեռ ևս չի վերջացրած, ապա բանաստեղծի յերկերի նոր խորհրդային ակադեմիական հրատարակությունն այդ բնագավառում կհանդիսանա յեզրափակիչ ավարտական մոմենտ: Այդ նույն հրատարակությունը, հաշվի առնելով և չուրացնելով պուշկինյան տեքստերի ամբողջ ձեռագրային և տպագիր պատմությունը, խորհրդային ընթերցողին կտա նաև Պուշկին-կլասիկի պոետական ժառանգության իսկական «իրանը»:

Մորհրդային գիտությունը շարունակեց և խորացրեց բուրժուական գիտության պուշկինյան տեքստերի «մեկնաբանման» աշխատանքը: Մորհրդային պուշկինիստները շատ բանում շարունակեցին, ընդարձակեցին և ճշտեցին իրենց նախորդների աշխատանքը: Հեղափոխության տարիների ընթացքում խորհրդային պուշկինագետները հսկայական աշխատանք կատարեցին Պուշկինի յերկերը նրա կենսագրության փաստերի հետ հարաբերակցելու ուղղությամբ, գրանցեցին և նկարագրեցին Պուշկին-բանաստեղծի և Պուշկին-



արձակագրի հաղորդակցումը իր նախորդ և ժամանակակից ուսուս և արևմտայեվրոպական գրողների հետ: Նրանք սիրով և խնամքով նկարագրեցին Պուշկինի ստեղծագործական մտքի շարժումը մի շարք թեմաների վրա, վորոնք բանաստեղծի ձեռագրերով առավել կամ նվազ առատությամբ յենթարկված են դուռումհնտացիայի: Պուշկինի կենսագրությունն ստեղծելու համար հավաքեցին և նախապատրաստեցին ընդարձակ նյութ, բանաստեղծի զանազան չերկերի և ստեղծագործության առանձին ետապների սոցիալական իմաստավորման համար կուտակեցին բազմաթիվ գիտողություններ, դրին մի շարք հարցեր պուշկինյան ժառանգությունը գնահատելու համար, մասնատեցին պուշկինյան պրոբլեմը: Մեր գրական գիտության հերթական խնդիրն է հանդիսանում ստեղծել մեծ բանաստեղծի սպառիչ կենսագրությունը:

Շատ սուր կերպով զգացվում է նախահեղափոխական կենսագրական գրականության լրիվ վերանայման պահանջը: Կուտակված է նոր մեծ նյութ. հին աշխատություններում (Աննենկովի, Ստոյունինի և ուրիշների) հաղորդվող շատ կենսագրական փաստեր ստեղծված են վոչ թե իրականությամբ, այլ Պուշկինի սոցիալական ներըմբռնմամբ. շատ փաստեր ել, վոր հայտնի էյին առաջուց, նախկին հետազոտողները զանց էյին առնում վորպես փաստեր, վոր պիտանի չեն պուշկինյան այս կամ այն «լեզենդայի» համար, վորպես փաստեր, վոր չեն տեղավորվում Պուշկինի անձնավորության և բանաստեղծական ժառանգության մեկնարանման վորոշ իդեոլոգիական սխեմայի մեջ: Վերջապես, բանաստեղծի գիտական կենսագրության



նկատմամբ մեր ունեցած պահանջները բոլորովին աչք են, քան բուրժուական պուշկինիստներինը. մեզ հարկավոր է գրողի սոցիալական կենսագրություն, վոր կյանքն ու գործունեությունն իմաստավորի միասնության մեջ վորպես հասարակական կարգի յերևուցթ, վոր իրենց խթանն ու ակունքները գտնում են սոցիալական իրականության մեջ, և վոչ թե «վարք» Պուշկինի «գաղտնի սիրո» կամ այն պիստոլի, վորով մենամարտության ժամանակ սպանվեց բանաստեղծը, ճակատագրի մանրամասն ու ջանասեր հետազոտություններով:

Մեր ժամանակվա պուշկինիստների մի շարք արժեքավոր աշխատություններում մենք արդեն ունենք բանաստեղծի կյանքի և ստեղծագործության հենքը (կանվան): Բայց դա քիչ է: Միայն Պուշկինի սպառնիչ գիտական կենսագրությունը լինելու դեպքում կարող է լուծվել նաև նրա մասսայականացման խնդիրը՝ ընթերցող լայն մասսաներին, նրանց թվում և պատանի ընթերցողին մեծ բանաստեղծի կյանքին և գործունեյությանը ծանոթացնելու խնդիրը:

Իե՞ն ևս լրիվ չի ուսումնասիրված Պուշկինի սոցիալական ներըմբռնման թեորիան և պրակտիկան հարյուր տարվա ընթացքում, սկսած նրա մահվան որից: Բուրժուական հետազոտությունները Պուշկինի մասին իրենց վիաստերի շարագրման և առանձին յերկերի մեկնաբանման մանրամասնություններով յենթարկված են ուշադիր քննադատության, իսկ «ազգային» բանաստեղծի պատկեր ստեղծելու բուրժուական գիտության ամբողջ աշխատանքն իր իդեոլոգիական թեղղվածությամբ, իր պրոբլեմացնությամբ, վոր ան-



կասկած ունեն մի շարք հին հետազոտութիւններ, պուշկինյան «լեգենդա» ստեղծելու իր ձգտումներով բավականաչափ չի լուսարանված:

### III

Պարզելով պուշկինյան ժառանգութիւնն արժեքավորութիւնը մեր կուլտուրայի շինարարութիւնն համար, հետազոտողները սովորաբար, — և միաժամանակ ճիշտ, — յեւնում են այն իրականութիւնն գնահատութիւնից, վորը Պուշկինի ստեղծագործութիւնն մեջ իր արտահայտութիւնն և գտել:

Մեր տեսակետից նրանց հետագա դատողութիւններում սխալն այն է, վոր նրանք, մի կողմից, այդ իրականութիւնը խիստ նեղ են սահմանագծում, — նրանք այն տեսնում են բացառապես XIX դ. սկզբի ռուսական կյանքում, իսկ մյուս կողմից՝ այն, վոր Պուշկինի ստեղծագործութիւնն սոցիալական բնութիւնն ու սոցիալական կարևորութիւնը վորոշելիս, նրանք առավելապես վորոշում են իրեն Պուշկինի դասակարգային բնութիւնը:

Վրոմանց համար այդ բնութիւնը «հին տոհմիկ արխատկրատիայի» իդոլոգի բնութիւնն է, վրոմանց համար էլ՝ «բուրժուականացած միջին ինտելիգենտ ազնվականութիւն» տրամադրութիւններ ի արտահայտչի բնութիւն, մյուսների համար Պուշկինը «կալվածատիրական բուրժուականութիւնն տեղեկներ, պրուսական տիպի կապիտալիստական տեղեկներ Վադ արտահայտիչն են»: Կա և մի այսպիսի տեսակետ, ըստ վորի Պուշկինը, վրոն արտացոլում է ռուսական կյանքի շարժման պատմական մեծ պրոցեսը «միջնադարից»



գեպի նոր բուրժուական հասարակութունը», այդ պրոցեսն արտացոլում է իր սեփական ապագասակարգայնացման դիրքերից, իր—և ըստ յերևույթին իր դասակարգի—սպեցիֆիկ-ազնվական իդեոլոգիայից դեպի «պրոֆեսիոնալ-գրողի» և «վաճառական-ձեռնարկատիրոջ» իդեոլոգիային անցնելու դիրքերից: Այս վերջին տեսակետով բուրժուական իրականութունը Պուշկինի ստեղծագործության մեջ է մտնում նրա «պրոֆեսիոնալիզացիայի» հետևանքով:

Չտալով Պուշկինի ստեղծագործության սոցիալական բնութիւնը և դրանով իսկ նրա պատմական կարեւորութիւնը վորոշելու այդ փորձերի գնահատութիւնը, մենք հնարավոր ենք գտնում մատնանշելունրանց բոլորի համար ընդհանուր պատմական մտահորիզոնի նեղ և աղքատացած լինելը, վորի շրջանակներումն են շարժվում վերոհիշյալ տեսակետներ ստեղծողները: Նրանց բոլորի համար Պուշկինի և նրա ստեղծագործության իրականութիւնը բացառապես ռուսական իրականութիւնն է, և այն ել վոչ թե աճող հսկայական Ռուսական կայսրության իրականութիւնը, այլ ռուսական կենտրոնական նահանգների իրականութիւնը, ազնվական-կալվածատերերի դաստակերտների իրականութիւնը, վորոնք ձմեռներն ապրում են Մոսկվայում և Պետերբուրգում:

Նման մտահորիզոնով կարելի է արդյոք բարձրանալ մինչև այգպիսի հանճարի տեր բանաստեղծի, ինչպիսին է Պուշկինը, և այնպիսի դարաշրջանի, վոր արտացոլել է նրա ստեղծագործութիւնը, պատասական կարևորության լիարժեք իմաստավորումը:

Կարելի է արդյոք, գնահատելով Դանտեյի համաշ-



խարհային-պատմական նշանակութիւնը, մնալ Յըր-  
րեհիցիայի սահմաններում, Գլոթեյի ժառանգութեան  
բարգոլթիւնը բացատրել խուլ Վալմարի արքունիքի  
կյանքով. կարելի՞ է արդո՞ք բացառապէս նույնիսկ  
XVI դ. սոցիալական հակասութիւններով հարուստ  
անգլիական կյանքով իմաստավորել համայնվրոպա-  
կան Շեքսպիրին:

Մինչդեռ համայնվրոպական կապերը--տնտեսական,  
քաղաքական, կուլտուրական—XIX դարում, կապի-  
տալիզմի հսկայական աճման, տեխնիկայի և մարդկա-  
յին հարաբերութիւնների հնարավորութիւնների մինչ  
այդ չտեսնված զարգացման շրջանում, անհամեմատ  
աճել են վոչ միայն իտալական վաղ վերածնութեան  
կամ անգլիական հեղափոխութեան նախորդակի դա-  
րաշրջանի համեմատութեամբ, այլ և նույնիսկ համե-  
մատած Գլոթեյի դարաշրջանի հետ, վորն աճեց  
XVIII դ. Գերմանիայի քաղաքական և կուլտուրա-  
կան մասնատվածութեան պայմաններում:

Արդեն Պուշկինի կրտսեր ժամանակակիցները, վո-  
րոնք «յեվրոպացիներ» են զգացմունքներով և աշխար-  
հահայացքով, Պուշկինի մասին մտածում և խոսում են  
համայնվրոպական մասշտաբով: Թող նրանք Պուշկի-  
նին չընդունեն վորպէս իրենց ծխի «յեվրոպացու»,—  
դրա համար նրանք իրենց հիմքերն ունեն, —բայց մեզ  
համար կարևոր է նրանց մտածողութեան ձևը: Ահա,  
որինակ, Ն. Վ. Ստանկևիչը արևմտականների և սլա-  
վոնասերների գաղափարական սրված պայքարի նա-  
խորդակին, իր բանակի գաղափարական արժեքների  
հավաքման պրոցեսում, 1838 թ. ոգոստոսին, Պուշկի-  
նի մահվանից շատ չանցած, Ն. Գրանովսկուն գրում



ե. «... Գյոթեն... այնպիսի շատ գործեր ունի, վորոնց մեջ յերևում է նրա համաշխարհային զարգացումը, վորն, ի հարկե, Պուշկինը չուներ և վորը մենք նրան չենք վերագրում»:

Մրանից հիսուն տարի առաջ Ֆրանսիացի քննադատ Մ. դե-Վոգյուենն ուսսական վեպի մասին գրած իր գրքում տալիս է պուշկինյան հանճարի չափազանց հետաքրքիր բնութագիրը:

Ռուսական ուսմանտիգմին և Պուշկինի պոեզիային նվիրված գլխում Մ. դե-Վոգյուենն գրում է. «Պետք է ընդունել, վոր Պուշկինի ստեղծագործությունն, ամբողջութեամբ վերցրած, վոչ մի եթնիկական գիծ չի ցուցարերում: Նա ուսմանտիկ է, համակված այնպիսի վոգով, վորով միաժամանակ վոգեվորվում էյին նրա չեղբայրակիցները Գերմանիայում, Անգլիայում և Ֆրանսիայում. նա արտահայտում է ընդհանուր զգացուունքներ և դնում է ուսական թեմաներում, բայց ազգային կյանքը նա դիտում է դրսից, ինչպես և բոլորը նրա աշխարհից, մի գեղագետի աչքերով, վորն ազատ է ոսսալի վորևե ազգեցությունից:

«... Միթե՞ դա նշանակում է նսեմացնել Պուշկինին, խլելով նրան ոսսայից, նրան մարդկութեանը հանճնելու համար: Յես այդ չեմ կարծում:

«... Պատահականությունը, վոր ստիպեց նրան ծնվել Ռուսաստանում, կարող էր նրան նետել վորևե ուրիշ յերկիր. նրա ստեղծագործությունը դրանով բոլորովին չէր փոխվի, նա կմնար այն, ինչ վոր նա կա՛ պարզ և ճիշտ հայելի, վորի մեջ 1830 թ. մոտ Յեվրոպայի կրթված հասարակության կողմից ընդունված հագուստի տակ արտացոլվում են մարդկային բոլոր



զգացմունքները: Այդ նույն վոտանավորները, վոր  
յիբրդում են ոռոսական բնությունը, ոռոսական սերը,  
ոռոսական հայրենասիրությունը, յեթե նրանց մեջ  
փոխենք մի քանի բառեր, կերզին նույն առարկանե-  
րը անգլիացու, ֆրանսիացու կամ իտալացու հա-  
մար:

«... Յեթե հրաշալի ե լինել Ռյուբրիկի վորդին, ա-  
պա ավելի լավ ե լինել Ադամի վորդի. և յեթե, ինչ-  
պես կարծում են վոմանք, մեծ արժանիք ե հասկա-  
նալի լինել միայն Մոսկվայում, ապա գուցե ավելի  
մեծ արժանիք ե ստիպել մտածել, լալ և ժպտալ ա-  
մեն տեղ, վորտեղ շնչում ե մարդը. և Պուշկինին հա-  
ջողվեց այդ»:

Պուշկինը ծնվեց և ապրում եր մեծագույն սոցիա-  
լական, քաղաքական, կուլտուրական տեղաշարժերի և  
ցնցումների դարաշրջանում: Ֆրանսիական հեղափո-  
խությունն իր ազդեցութամբ շատ յերկրներ գրավեց  
և դրանով կարծես ամբողջ Յեվրոպան, յեթե վոչ ամ-  
բողջ աշխարհը, կապեց մի ամբողջության մեջ:

1836 թ. Պուշկինը գրել ե.

Припомните, о други...

Чему, чему свидетели мы были!

Игралища таинственной игры,

Метались смущенные народы,

И высились, и падали цари:

И кровь людей то славы, то свободы,

То гордости багрила алтари.

Կամ 1830 թ. «К вельможе», ուղերձում.

Все изменилося. Ты видел вихорь бури,



Падение всего, союз ума и фурий,  
 Свободой грозною воздвигнутый закон,  
 Под гильотиною Версаль и Трианон  
 И мрачным ужасом смененные забавы.  
 Преобразился мир при громах новой славы.  
 Давно Ферней умолк. Приятель твой Вольтер.  
 Превратности судеб разительный пример,  
 Не успокоившись и в гробовом жилище,  
 Доныне странствует с кладбища на кладбище.  
 Барон д'Ольбах, Морле, Гальяни, Дидерот,  
 Энциклопедии скептический причет,  
 И колкий Бомарше, и твой безносый Касти,  
 Все, все уже прошли. Их мненья, толки, страсти  
 Забыты для других. Смотри: вокруг тебя  
 Все новое кипит, бывшее истребля.  
 Свидетелями быв вчерашнего паденья,  
 Едва опомнились молодые поколения.  
 Жестоких опытов собирая поздний плод,  
 Они торопятся с расходом свесть приход.

Այդ դարաշրջանի առաջավոր մարդիկ—փիլիսոփաները, բանաստեղծները, կոմպոզիտորները, նկարիչները,—հանդիսանալով իրենց ազգի մտածումների և տրամադրությունների արտահայտիչները, միաժամանակ զգում և ստեղծագործում ելին լեզուպական իրականության պլանով, համաշխարհայնության նշանի տակ, ստեղծագործում ելին «ամբողջ» մարդկության համար: Համաշխարհայնության պաթոսում, վոր անցյալ դարի սկզբի հանճարներին տվել եր հեղափոխության փոթորիկը, ժողովուրդների զեպի ազատությունն ու



ստեղծագործությունն ունեցած մեծ շարժումները, գտնվում են Բեթհովենի սիմֆոնիաների, Շիլլերի, Բայրոնի, Շելլիի բոցավառ վոտանավորների նաև մեզ վրա թողած հզոր ներգործման նախադրյալները: Միջնադարյան իրավարից ազատագրված բուրժուական մտքի լարվածության մեջ, վոր դեռ ևս լիովին չի վախեցած նոր հեղափոխական ամպրոպների ճայթումներով, մենք կգտնենք XIX դ. մեծ փիլիսոփայական իդեալիստական սիստեմների կարևորության բացատրությունը մեզ համար, Գեոթեյի Ֆաուստի ամենախոր հետաքրքրության բացատրությունը նաև մեզ համար:

Ահա մտքերի և զգացմունքների դիապազոնի այս «համաշխարհայնության» մեջ, վորով ներթափանցված է Պուշկինի ամբողջ ստեղծագործությունը, մենք կըգտնենք նրա ժանանգության մեզ համար ունեցած նշանակության չափը վորոշելու բանալին:

Ազգային պլանով առած Պուշկինը առաջին և մեծ ուսու բանաստեղծ-յեվրոպացին է: Նրա պոեզիայով ուսսական կուլտուրան դարձավ յեվրոպական կուլտուրայի ասպեկտներից մեկը, նրա միջնադարյան ֆեոդալիզմից դեպի նոր ժամանակների բուրժուական հարաբերություններն անցնող մեծ պատմական դարաշրջանի բարդ և խոր հակասություններով հանդերձ: Պուշկինով վերջնականապես ուսսական կյանքի մեջ մտան «համաշխարհայնության» թեմատիկան և տոնայնությունը: Ուստի և կատարելապես բնական է, վոր իրականության պուշկինյան պատկերացումը, դարաշրջանի հարցերի պուշկինյան դրումը ունեն վոչ միայն վորպես նեղ-ազգային, տված նեղ-ազգային



նյութով, այլ և վորպես համայնվրոպական նշանակություն: Իզուր չե, վոր Պուշկինի բանաստեղծական ցուցումներն անցյալ դարի սկզբի կյանքի մասին կարող են ոգտագործվել նաև յեվրոպական կյանքը բնութագծելու համար: Որինակ, շատ սրամիտ և հաջողությամբ ոգտագործեց Պուշկինի «Յեվգինի Ոնեգինը» գերմանական եստելիստներից մեկը, վոր ուսումնասիրում եր անցյալ դարի սկզբի «Արևմտյան Յեվրոպայի հասարակակայնությունը» (Գլելխեն-Ռուսվուրմ): Նա իր գրքում ամբողջ եջերով ցիտում ե «Յեվգինի Ոնեգինը», բնութագրելով XIX դ. սկզբի Փարիզի, Լոնդոնի, Վիեննայի հասարակության վերին խավերի կյանքը:

Յեվրոպական պլանով առած Պուշկինը ոուս ազգի առաջին մեծ յեվրոպական բանաստեղծն ե, վոր նոր լեզվով, նոր պատկերներով ու հնչյուններով արտացոլեց իր գարաշքանի յեվրոպական իրականության նոր ոուսական տեղամասը: Արդյոք յեվրոպական համաշխարհային մասշտաբով նա նույնքանն ե մեծ և կարելի, վորքան Գյոթեն, Շեքսպիրը, Դանտեն, — դա արդեն վոչ թե Պուշկինի հանճարի մեծության հարց ե, այլ այն Ռուսաստանի «համաշխարհայնության» չափի, վորտեղ ապրում և ստեղծագործում եր Պուշկինը Իսկ այնքան, վորքան նա նոր յեվրոպական լեզվով գրող առաջին բանաստեղծն եր, բանաստեղծը յերիտասարդ ազգային կուլտուրայի, վոր կազմվել ե ավելի հասուն կուլտուրաների դրացիության և փոխհարաբերությունների մեջ, նա, գուցե, Դոգուլի հետ համեմատած ավելի յեվրոպացի յեր, քան ոուս: Բայց արդյոք դա կնսեմացնի Պուշկինի համաշխարհային



նշանակութիւնը մեր որերում, յերբ նոր պրոլետարական «համաշխարհայնության» տրամադրութիւնները ավելի ու ավելի տիրաբար կազմակերպում են նաև բոլոր լիզուների պոնդիան:

Միաժամանակ Պուշկինը ազգային և ամենաընդարձակ իմաստով, այնքան վորքան նրա ստեղծագործութիւնը արտացոլել և ուսական իրականութիւնը նրա բուրժուական դոյացման դարաշրջանում, նրան հատուկ բոլոր հակասութիւններով:

#### IV

Կարիք չկա շատ խոսելու այն բանի մասին, վոր Պուշկինն ինքն իրեն զգում էր չեվրոպացի, ամբողջ աշխարհի քաղաքացի, ի հարկե, վոչ այն իմաստով, ինչպես որինակ յերիտասարդ ռազիշչևական-կոսմոպոլիտները (Պոպուզաև, Բորն), վորոնք այդ տեսակետից ռացիոնալիստական XVIII դ. մարդիկ էյին, վորոնց համար «ամբողջ աշխարհը» մտածվում էր վորպես արստրակտ ընդհանուր գաղափարների շարժման և իրացման ասպարեզ: Վնչ, Պուշկինը նոր, հետհեղափոխական ժամանակվա մարդ է, վոր զգում և մտածում է խիստ պատմականորեն, և նրա «ամբողջ աշխարհի քաղաքացիութիւնը»—մարդկային կուլտուրայի միասնության գիտակցութիւնը՝ հիմնված պատմական աշխարհահայացքի վրա, դարձնում է նրան իր ժամանակվա կուլտուրական յեվրոպացու տանջանքների և ուրախութիւնների մասնակից:

Ինքը Պուշկինը հաճախ խոսում է իր չեվրոպացի ուսուցիչների, իր յեվրոպացի «բարեկամների» և «թըշնամիների» մասին:



Վորպես «յեվրոպացի» Պուշկինը Ռուսաստանում  
իրեն վատ եր գգում: Դուք հիշո՞ւմ եք «Յեվզենի Ոսե-  
գինի» հուզիչ սողերը, զրված Ողեսայում, ծովի մոտ

Придет ли час моей свободы?  
Пора, пора!—взываю к ней;  
Брожу над морем, жду погоды,  
Маню ветрила кораблей.  
Под ризой бурь, с волнами споря;  
По вольному распутью моря  
Когда ж начну я вольный бег?  
Пора покинуть скучный брег  
Мне неприязненной стихии...

Նույն տրամադրություններն են և նամակներում՝  
Ահա Պուշկինի թախծոտ հարցը 1825 թ. դեկտեմբերի  
առաջին կիսում Պ. Ա. Պլետնյովին ուղղած նամակում.  
«Ի՞նչ անեմ Ռուսաստանում»:

Կամ 1826 թ. մայիսի 27-ին Պ. Ա. Վյազեմսկուն  
գրած նամակում. «Դու վոր, կապված չես, ի՞նչպես ես  
կարողանում մնալ Ռուսաստանում: Յեթե ցարն ինձ  
ազատություն տա, յես մի ամիս ել չեմ մնա: Մենք  
տխուր դարումն ենք ապրում, բայց յերբ յերևակա-  
յում եմ լոնդոնը, թուշե ուղիները, շոգենավերը, անգ-  
լիական ժուռնալները կամ Փարիզի թատրոնները...  
ապա իմ խուլ Միխայլովսկոյե գյուղն ինձ ձանձ-  
րույթ և կատաղություն և պատճառում»: Հենց այդ  
նույն նամակում հայրենի չերկիրը նրա համար «ա-  
նիծյալ Ռուսաստան» է:

Յեվ 1836 թ. մայիսին Մոսկվայից նա գրում է  
կնոջը. «Բրյուլովը հիմա իմ մոտից գնում է Պետեր-



բուրգ հակառակ իր կամքին. վախենում ե կլիմայից  
և գերությունից... Մատանան զրգեց ինձ ծնվել Ռու-  
սաստանում հոգով և տաղանդով»:

Բա՛վական ե միայն թերթել Պուշկինի գրադարա-  
նից մնացած գրքերի Բ. Մոզզալսկու նկարագրու-  
թյունը («Пушкин и его современники», պրակ IX—  
X), զգալու համար, վոր Պուշկինը յեվրոպական կուլ-  
տուրայի տեր մարդ եր, վորը մինչև իր կյանքի վեր-  
ջըն իր մտավոր պահանջներով իր դարի հետ հավա-  
սար եր ընթանում, ընդհուպ մինչև ուստոպիական սո-  
ցիալիզմի գրականությունը (նրա գրադարանի սեն-  
սիմոնիստական գրքերը):

Բայց միաժամանակ, հասկանալի ե, վոր ուշժի մեջ  
ե մնում այն հարցը, թե յեվրոպական իրականու-  
թյան և բուրժուական յեվրոպական կուլտուրայի վճի-  
կողմերը, սոցիալական վճի դիրքերից ե իր ստեղծա-  
գործությամբ արտացոլել Պուշկինը:

Նորերս Պուշկինի ստեղծագործության հետազո-  
տողներից մեկը չափազանց ճիշտ դրեց մի սկզբուն-  
քային հարց. «արդյոք անցյալի ազգային մեծ բա-  
նաստեղծներ՝ Դանտեն, Շեքսպիրը, Պուշկինը քաջքաջ-  
վող ֆեոդալիզմի արտահայտիչներն եյին, թե՛ նրանք  
այն ուշժերն եյին, վորոնք աշխատում եյին ֆեոդա-  
լական գիշերից ազատագրվելու համար... Դանտեյի,  
Շեքսպիրի, Պուշկինի հարցն ըստ եղության նույն  
հարցն ե, թե ինչից ե աճում մեծ արվեստը--քայ-  
քայվող հնի փտությունից, թե՛ աճող նորի ուշժերից»:  
Հարցին նաև ճիշտ պատասխան եր տված. «Նրանք  
բոլորն ել նորի, բուրժուազիայի ազատագրող սկզբ-  
բունքների արտահայտիչներն եյին»:



Հարցն այդպես դնելով, կարելի է և պետք է ընթանալ Պուշկինի ժառանգության պատմական կարեւորությունը վորոշելու ուղղությամբ:

Բայց այդ ճիշտ յեկակեալին դրույթները չերևան հանելիս հետազոտողները հաճախ սխալ ճանապարհի վրա յեն կանգնում: Ամենատարածված սխալներից մեկն է հանդիսանում այն, վոր Պուշկինի կյանքն ու ստեղծագործութունը չափազանց խիստ՝ մինչև հակադրության աստիճան՝ բաժանվում է յերկու շրջանի՝ մինչև 1825 թ. դեկտեմբերի 14-ը և այդ թվականից հետո: Յերիտասարդ Պուշկինին հակադրելով հասուն Պուշկինին, հանգում են հակասական և սկզբունքորեն անընդունելի պնդումների, վոր մեզ խանդարում են ճիշտ լուծելու Պուշկինի ժառանգության նկատմամբ մեր ունենալիք վերաբերմունքի հարցը:

Մի կողմից պնդում են, թե յերեսունական թվականների Պուշկինն աճում և հասունանում է վորպես դեղարվեստագետ, մյուս կողմից՝ ասում են, թե յերեսունական թվականների Պուշկինը «կործանման ուղու վրա» եր կանգնած, վոր նա գաղափարապես «շվարածության» և «կուրուլթյան» վիճակ եր ապրում, վոր ցարիզմի հետ իր հաշտեցմամբ նա հասնում է մինչև «սերվիլիզմ», «լակեյության», վոր Պուշկինի ստեղծագործության վերջին շրջանում նրա մեջ դժվար է բուրժուական ազատագրության բանաստեղծին բաժանել «արդեն գարշահոտող» ազնվականից:

Հարցի հենց այսպիսի դրումը հասցնում է այն բանին, վոր նսեմացնում է Պուշկինի ազգային և համաշխարհային-պատմական նշանակությունը: Միաժամանակ դա բերում է նաև պուշկինյան ժառանգու-



Թյան պրորւմի սխալ լուծման. մեզ առաջարկում են հասուն Պուշկինին ներըմբռնել միայն վորպես «գեղարվեստագետի», վորպես ձևի «վարպետի», վորի յերկերը զուրկ են բարձր գաղափարական բովանդակությունից:

Հազիվ թե պետք լինի ապացուցել, վոր պուշկինյան պրորւմի նման եստեսական, զուտ ֆորմալիստական լուծումը մեզ բավարարել չի կարող:

## Վ

«Դեպի կործանում» գնացող Պուշկինի պատկերը զգալի չափով ներշնչված են բանաստեղծի քրիստոնեյական վախճանի այն պատկերի համողեցուցիչ մանրամասնություններով, վոր հանդուցյալի ընտանիքի և հենց իրենց մասին հոգալով նկարագրեցին Նիկոլային և նրա շրջապատին, հետո նաև ամբողջ Ռուսաստանին Պուշկինի մերձավոր բարեկամները (Ժուկովսկին, Վլադիմսկին): Զնշվել էյին հետագա սերընդների գիտակցությունից և՛ բանաստեղծի հուզիչ հրաժեշտը իր գրքերի, իր հավատարիմ ընկերների հետ, և՛ բանաստեղծի սիմբոլիկ խնդիրքը հոգևորքի ժամանակ նրա մահվան սնաբի մոտ իր հետ յեղբայրացած Վ. Ի. Դալին, թե՛ «Ինչ բարձրացրու ինձ, գնանք, բայց բնորձ, ավելի բնորձ—զե՛ գնանք»: Ժուկովսկու վերսիան կանոնականացվեց, և ավելի ուշ Պ. Վ. Աննենկովի աշխատության մեջ այսպիսի արտահայտություն ստացավ. «Կրոնական վոգեկորությունը, ավարտված ներքին կատարյալ հաշտությամբ իր բոլոր թըշնամիների հետ և գոհաբանական կոչով այն միապետը, իր թագակիր բարեգործը,—այս բոլորը Պուշկինի մահն»:



իրոք դարձնում ե մի դեպք, լի դրամատիքական ուշ-  
ժով և խորը բարոյական գաղափարով» («Материалы», 1828 թ., և՛ 421):

Պ. Յե. Շչեգոլևը բավական ակնառությամբ և համոզեցուցիչ կերպով ցույց տվեց, թե այդ լեգենդան ինչպես եր ստեղծվել: Բայց հասկանալի չե, Վոր «դեպի կործանում ընթացող Պուշկինի», «գարշահոտ անվականի» պատկերն իր բարեկամների պատկերացման մեջ պատճառաբանվում ե վոչ միայն Պուշկինի վերջին սրբերով: Նա մի կողմից մեղադրվում ե իր «կապիտուլյացիայով» ցարի առաջ դեկտեմբերի 14-ից հետո և հետագա «հաշտությամբ» Նիկոլայի հետ և մյուս կողմից՝ նրա գրական գործունեյության մի շարք մոմենտներով:

Դեկաբրիստների շարժման և ապստամբության նկատմամբ Պուշկինի վերաբերմունքի հարցն արդեն ընդարձակ հատուկ գրականությունն ունի: Մենք մեր չենթադրություններով մտադիր չենք վոչ վերանայիլու, վոչ ել մեծացնելու այն: Անենք միայն մի դիտողություն, դեպի 1825 թ. դեկտեմբերյան ապստամբությունը Պուշկինի ունեցած վերաբերմունքի հարցը լուծող շատ աշխատությունների վրա լիբերալ-բուրժուական պաթոսի և հեղափոխականության բուրժուական ըմբռնման յուրահատուկ փառ ե նըստած, մյուս աշխատություններում նկատվում ե տենդենց տեղափոխելու դեպի հեռավոր անցյալը մեր ուրբերի հեղափոխական պայքարի բանականությունն ու ետիկան:

Մենք կանգ կառնենք մի մոմենտի վրա, վոր վերաբերում ե տվյալ հարցին,—1825 թ. դեկտեմբերից



հետո ցարի առաջ իր «Կապիտուլյացիայի» պուշկինյան ըմբռնողության վրա:

Իրեն Պուշկինի մի քանի բանաստեղծական արտահայտություններ կարծես հիմք են տալիս կարծելու, Վոր ինքն իր վաբմունքը դեկտեմբերից հետո պատրաստ է համարելու յուրատեսակ դավաճանություն: Կարելի է կարծել, թե «դեկտեմբերի» իր տըրամագրությունները Պուշկինը հիշում է Հորացիուսի նմանողությամբ գրած «Кто из богов мне возвратил», վոտանավորի մեջ (1835 թ.), գուցե Մուշկինն իրեն էր վերագրում Պոմպեոսին ուղղած Հորացիուսի խոսքերը:

Ты помнишь час ужасной битвы,  
Когда я, трепетный квирит,  
Бежал, нечестно брося щит,  
Творя обеты и молитвы?  
Как я боялся! как бежал!  
Но Эрмий сам незапной тучей  
Меня покрыл и в даль умчал  
И спас от смерти неминучей.

Հին հռոմեյական կյանքից առնված «Կեսարը ճանապարհորդում էր» («Цезарь путешествовал») պատմական պատմվածքի հատվածներում Պետրոսիոսը, դիտելով ողայի այդ տողերն, ասում է. «Նորամանկ բանաստեղծն ուղում էր Ոգոստոսին և Մեկինասին զվարճացնել իր վախկոտությամբ, վորպեսզի նրանց ուրիշ բան չհիշեցնի»:

Վորպես Պուշկինին մոտիկ անձնավորություններին հաղորդված վախի նման տրամագրություններին ար-



ձագանք ե հնչում 1826 թ. նոյեմբերի 9-ին Պ. Ա. Վյազեմսկուն զրած նամակում իր դայակի մասին հայտնածը. «Յերևակայիր, վոր նա 70 տարեկան հասակում արքեպիսկոպոսի սիրտը հուզելու և նրա դաժան վողիին սանձահարելու համար անգիր մի նոր աղոթք և սովորել, մի աղոթք, վոր հավանորեն զըրված ե իվան Յ(արի) ժամանակ»:

Իսկ ըստ Պուշկինի զրազրություններում պահպանված նրա հետգեկտեմբերյան տրամադրությունների արձագանքների և ըստ ցարի հետ հաշտվելու նրա հետագա ըմբռնման կարելի յե կարծել, վոր Պուշկինը Նիկոլայ Ա-ի հետ իր «հաշտությունը» գիտում եր վորպես մի տեսակ պայմանագիր: Թող նա խարված լինի—ցարը Պուշկինին «յուրացրեց» (ժուկովսկու արտահայտությամբ),—մեր հասկացողությամբ թող Պուշկինի հավատը ցարի հետ պայմանագիր կընքելու հնարավորության մասին ավելի քան միամիտ լինի,—մենք չպետք ե մոռանանք, վոր Պուշկինի համար այդպիսի պայմանագրի սոցիալ-հոգեբանական նախադրյալներ կային: Իզուր չե, վոր իրենց ազատվելու ժամանակ ղեկաբրիստներից շատ շատերը ևս «համաձայնության յեկան» Նիկոլայ Ա-ի միապետության հետ:

Վոր Պուշկինը կարող եր իրեն իրավունք համարել մտածելու պայմանագրի մասին, այդ նրան ասում եր և՛ իր, վորպես բանաստեղծի, սեփական ինքնագնահատությունը և՛ նրա գրական գործունեությունից հսկայական քաղաքական նշանակություն աչն ընդհանուր ճանաչողությունը, վորը,—և իր և Նիկոլայի համար,—առանձնապես վառ արտահայտություն:



ստացաւ դեկաբրիստների գործի դատաւարութեան  
ընթացքում. իզուր չե, վոր 1831 թ. ինքը Պուշկինը  
լրագիր հրատարակելու առթիւ III բաժանմունքին  
ներկայացրած գրութեան սևագիր ինքնագրում վըս-  
տահորեն հայտարարում ե. «Կարող եմ ասել, վոր  
հանգուցյալ թագաւորի վերջին հինգ տարում գրա-  
կանագետների դասի վրա յես անհամեմատ ավելի  
ազդեցութեուն ունեյի, քան մինիստրութեունը, չնա-  
յած միջոցների անհամեմատելի անհավասարութեա-  
նը»:

Յեւ հատկանշական ե այն, վոր այն ժամանակ,  
յերբ Պուշկինի բարեկամները (Ժուկովսկին, Վյազեմ-  
սկին) խոսում և մտածում են Պուշկինի համար «վո-  
ղորմածութեուն» հայցելու մասին, ինքն այդ ուղիով  
անխոս ընթանալու ցանկութեունը ըտրորովին չի հայտ-  
նում: Նա ծնկի չի գալիս, այլ ուզում ե հենց հա-  
մաձայնութեան գալ, յերկու կողմերի համար ել հա-  
րաբերութեունների կատարյալ վորոշակի լինելու պայ-  
մանով: 1826 թ. հունվարի յերկրորդ կիսում Պուշկի-  
նը գրում ե Ժուկովսկուն, «Հիմա յենթագրենք, թե  
կառավարութեունը կցանկանա դադարեցնել իմ շնոր-  
հազրկումը, յես պատրաստ եմ նրա հետ պայմանա-  
վորվելու (յեթե պայմաններ անհրաժեշտ են), բայց  
ձեզ վճռականորեն ասում եմ, վոր ինձ համար պա-  
տասխանատու չլինեք և ինձ համար չերաշխավորեք:  
Իմ ապագա ընթացքը կախված (կլինի) հանգամանք-  
ներից, կառավարութեան իմ նկատմամբ ունեցած վե-  
րաբերմունքից»:

Ձգացվում ե, վոր հենց դեկաբրիստների դատա-  
ւարութեան ժամանակ միայն Պուշկինն իսկապես գի-



տակցեց իր բանաստեղծական գործունեյության հսկայական հասարակական նշանակությունը:

Պ. Կ. Վյազեմսկուն գրած նամակներից կարելի է տեսնել, վոր նա իրեն բոլորովին չեր զգում վորպես մի մարդ, վոր պատրաստվել էր առանց վորևէ առարկության «ապաշխարելու»: 1826 թ. հուլիսի 10-ին նա Վյազեմսկուն գրում է. «Բունտն ու հեղափոխութունն ինձ չերեք դուր չեն յեկել, դա ճիշտ է. բայց յես կապ ունեյի համարյա բոլորի հետ և գրագրության մեջ եյի դավադիրներից շատերի հետ: Բոլոր վրդովեցուցիչ ձեռագրերն իմ անունովն ելին շրջում»: Նույնին՝ ոգոստոսի 14-ին 1826 թ. «Կախվածները կախված են, բայց 120 բարեկամների, յեղբայրների, ընկերների տաժանակիր աշխատանքի դատապարտվելը սոսկալի չե»: Յեվ թագավորին գրած իր նամակի առթիվ, վորի դուսպ տոնի համար բարեկամները նրան հանդիսանում եյին, նա նկատում է. «Դու իմ նամակը սառն ու չոր ես գտնում:—Սյլ կերպ ել լինել անկարելի չե: Լավ է, վոր գրված է: Հիմա (դեկաբրիստների դատավճռից հետո: Վ. Դ.) գրիչս չեր գառնա»:

Կարիք չկա հիշեցնելու, վոր մինչև իր մահը Պուշկինը չգավաճանեց դեկտեմբերի 14-ի իր «բարեկամներին» և «յեղբայրներին» տաժած զգացմունքներին:

Յեվ այնքան բնական է հնչում Կյուխելբեկերի «19 դեկտեմբերի» վոտանավորի անհայտ տունը, վոր նա ուղարկել էր Պուշկինին 1836 թ. հոկտեմբերի 18-ի նամակում:

Чьи резче всех рисуются черты  
Пред взорами моими? Как перуны



Сибирских гроз, его золотые струны  
 Рокоцуют... Песнопевец, это ты!  
 Твой образ—свет мне в море темноты.  
 Твои живые вещи мечты  
 Меня не забывали в ту годину,  
 Когда, уединен, ты пил кручину.

*Սովորաբար այն ուսումնասիրողները, վորոնք խոսում են Պուշկինի «Կործանման» մասին, այդ ճանապարհի վրա առաջին հերթին մատնանշում են «В надежде славы и добра», «Ստանսները» (1827 թ.), պնդելով, թե Պուշկինն այստեղ Նիկոլային ընդունում է «Պետրոսի գործի հաջորդ»:*

*Բայց ինչից է այդ հետևում, ինչո՞ւ մենք այդ «Ստանսները» չհարդանք, վորպես յուրատեսակ պայմանագրի, քաղաքական համաձայնության նախագիծ, վորի կետերի կատարումը հենց Նիկոլային իրավունք կտա լինելու «Պետրոսի գործի» հաջորդը:*

*Առաջին տնով՝ պատմական համեմատություն է.*

Начало славных дней Петра  
 Мрачили мятежи и казни.

*Բայց ահա թե ով եր Պետրոսն հետո,*

Но правдой он привлек сердца,

Но нравы укротил наукой,

И был от буйного стрельца

Пред ним отличен Долгорукой.

Самодержавною рукой

Он смело сеял просвещение.

Не презирал страны родной:

Он знал ее предназначенье.



То академик, то герой,  
То мореплаватель, то плотник,  
Он всеобъемлющей душой  
На троне вечный был работник.

Միթե սա մի ամբողջական ծրագիր չէ, վոր բանաստեղծն առաջարկում է ծանր քաղաքական ցնցումների միջոցով հենց նոր գահ բարձրացած չերիտասարդ ցարին: Յեւ չնա ընդգծում է Նիկոլայի Պետրոսի հետ մերձեցնելու ծրագրային թշուհը, պայմանականությունը:

Семейным сходством будь же горд,  
Во всем будь пращурю подобен:  
Как он неумоим и тверд,  
И памятью, как он, незлобен.

Մենք լավ գիտենք, վոր Պուշկինի «պայմանագիր» կնքելու հույսերը պատրանք դուրս յեկան: Բայց ինքը Պուշկինը Ֆելդշեկերով Մոսկվա ընթելուց հետո ել վորոշ ժամանակ պահպանում եր այդ պատրանքները: Այդ են ասում նաև ցարական ցենզորության նրա սկզբնական ըմբռնումը, և՛ «հանձարի» ու «լուսավորության» փառաբանումն այն գրության մեջ, վոր ներկայացրել եր ցարին, վորի հրավերով դբադվել եր «պատանեկության դաստիարակության առարկայով», և՛ 1828 թ. «Բարեկամներին» վոտանավորի մեջ («Нет, я не льстец») Նիկոլայի մասին արած հայտարարությունը:

... Он мне царственную руку  
Подал...  
Во мне почтил он вдохновенье,  
Освободил он мысль мою.



Այլելի ուշ, 30-ական թվականներին, Պուշկինն այլևս այդ պատրանքները չունի: Առանձնապես համոզեցուցիչ կերպով այդ են ասում 1834 թ. կնոջը գրած նամակները: Այսպես, ապրիլի 20-22-ի նամակում Պուշկինը գրում է. «Յես յերեք ցար եմ տեսել, առաջինը հրամայեց իմ գլխից հանել գդակը և իմ փոխարեն իմ դայակին նախատեց, յերկրորդն գեպ ինձ բարեհաճ չեր, յերրորդը թեև ինձ ծերությանս հասակում կամեր-պաժ դարձրեց, բայց նրան չորրորդով փոխել չեմ ուզում. բարության փոխարեն բարիք չեն սպասում: Տեսնենք, թե մեր Սաշկան (Պուշկինի վորդին: Վ. Գ.) ինչպես պիտի յուր գնա իր ծիրանածին անվանակցի (Նիկոլայ Լ-ի ժառանգի: Վ. Գ.) հետ. իմ անվանակցի հետ յես յուր չեյի գնում: Աստված չանի, վոր նա իմ հետքերով գնա, վոտանավորներ գրի և թագավորների հետ կուլի: Վոտանավորներում նա իր հորը չի գերազանցի, իսկ պատը գլխով չեն ծակի»: Յեվ մայիսի 18-ի նամակում, «Կախումն ունենալն հաճելի չե, մանավանդ, յերբ մարդ 20 տարի անկախ է յեղել»: Նույն «կախման» մասին է խոսում նաև հոեհիսի 8-ի նամակում. «Այն կախումը, վոր իրենց վրա յեն առնում փառասիրությունից կամ կարիքից ստիպված, ստորացնում է մեզ: Այժմ նրանք ինձ վրա նայում են վորպես ճորտի, վորի հետ կարող են վարվել աջնպես, ինչպես ուզենան: Շնորհազրկությունն ավելի հեշտ է տանել, քան արհամարհանքը: Յես Լոմոնոսովի պես, չեմ ուզում «տեր աստծու» տակին ծաղրածու լինել»:

Վոչ մի հիմք չկա խոսելու Պուշկինի «լակեյության», «սերվիլիզմի» մասին նաև այնպիսի գրվածք-



ների առթիվ, ինչպես «Клеветникам России», „Полтава“, -ն են: Գաղափարների այն շրջանը, վորոնցով կազմակերպված են այդ գրվածքները, ամբողջովին մտնում են Պուշկինի սոցիալ-քաղաքական հայացքների սխտեմի մեջ և համապատասխանում են ուսուպատմական անցյալի և նոր բուրժուական Ռուսաստանի խնդիրների նրա ըմբռնումին: Զուր չեք, վոր նրա «Պոլտավան» ստացավ նաև գեկաբրիզմին մոտեկանգնած իր բարեկամների՝ Կյուլխեյբեկերի, Կատենինի հավանությունը:

Վորպեսզի «պատմականորեն» ըմբռնենք Պուշկինի այդ գրվածքների գաղափարական-քաղաքական բովանդակութունը, յես ինձ թույլ կտամ հիշեցնելու «ազգության իրավունքի» և «բարեհարմարության իրավունքի» ուսմունքը, վոր պարզաբանված է Պետելի բուրժուական «Русская Правда», -յի առաջին գլխում: Ըստ Պետելի «Ֆինլանդիան, Նաալանդիան, Կուրլանդիան, Լիֆլանդիան, Բելոռուսիան, Մալոռուսիան, Նովորուսիան, Բեսարաբիան, Դրիմը, Վրաստանը, ամբողջ Կովկասը, Կիրգիզական յերկրները, Սիրիբի բոլոր ժողովուրդները և պետության ներսում ապրող ուրիշ զանազան ցեղեր ինքնուրույն անկախությամբ լերբեք չեն ոգտվել և լերբեք ել ոգտվել չեն կարող... Ուստի և նրանք բոլորն ել յենթակա յեն բարեհարմարության իրավունքին, ըստ վորում հարկադրված լինելով հավիտենապես հրաժարվելու առանձին ազգություն կազմելու իրավունքից»:

Լեհաստանի համար Պետելը թույլ է տալիս անել բացառություն, համաձայնում է, վոր նրա վե-



բարեբամբ «ազգության իրավունքը գերակշռի բարեհարմարության իրավունքին»: Բայց Լեհաստանի համար այդ «ազգության» իրավունքը շրջապատվում է մի շարք պայմաններով, ըստ վորում առաջին նախնական պայմանն է—«վորպեսզի լեհական պետության վերականգնումը տեղի ունենա Ռուսաստանից Լեհաստանի վոչ ինքնակամ անջատվելու միջոցով»:

Մենք ընթերցողին գիտակցորեն ենք հիշեցնում «Русская Правда»,-ն, վորպեսզի նրան նախազգուշացնենք Պուշկինի չերկերի գաղափարական բովանդակության գնահատման ավելորդ «մոդերնիզացիայից»: Ճիշտ է, կարելի է ասել, վոր Նիկոլայ I-ը Պետեկ չէ և վոր Պուշկինը Լեհաստանը թողնում է ինքնակամ միապետության «բարեհարմարության» իրավունքին և վոչ թե Պետեկի «գերագույն վարչության»: Բայց չէ վոր Պետեկն էլ ասում է, թե մինչև «բոլոր պայմաններին» հաստատվելը, «վորոնք Ռուսաստանն հետադայում լրիվ չափով ապահովելին ամեն տեսակի գործողություններից, վոր կարող են հակառակ լինել նրա հաստատուն անվտանգության կամ նրա կատարյալ խաղաղության համար», Լեհաստանում «ամեն ինչ պետք է մնա այժմյան վիճակում»: Լեհաստանի ապստամբության իրավունքը նա ընդունում է միայն Ռուսաստանի հետ միասին ինքնակալությունը տապալելու համար և վոչ թե ռուսական հեղափոխությունից անկախ, ինքնուրույնաբար ազգային, պետական անկախություն նվաճելու համար:

Ավելորդ չեմ համարում հիշեցնելու, վոր ըստ «Русская Правда»,-յի նոր Ռուսաստանի տերիտորի-



այլում «բոլոր ցեղերը պետք է ձուլվեն ու կազմեն մի ժողովուրդ», վոր «Ռուսաստանի պետութեան ամբողջ տարածութեան վրա» պետք է «իշխի միայն մի լեզու, ուր լեզուն», իսկ «Русская Правда»,-ի լեզվորդ գլխի § 3-ը սահմանում է «կանոն, վորպեսզի Վիտեբսկի, Մոզելի, Չերնիգովի, Պոլտավայի, Կուրսկի, Խարկովի, Կիևի, Պոդոլսկի և Վոլինսկի նահանգներում բնակվող բոլոր բնակիչներին համարել իսկական ռուսներ և այս վերջիններից վոչ մի առանձին անուններով չանջատել»:

Պետեի «Русская Правда»,-ի կողմից ազգային հարցին բուրժուական լուծումն տալու լույսի տակ մենք կկարողանանք պատմական որեկտիվութեանն ավելի մոտիկութեամբ վերաբերվել նաև Պուշկինի բանաստեղծական ասույթներին Լեհաստանի և Ուկրայինայի ազգային անկախութեան համար մղած պայքարի մասին: Ինչպես տեսնում ենք, ազգային հարցի պուշկինյան լուծումն ընթանում է նրա բուրժուական տրակտովկայի դժով, վոր իր արտահայտութեանը գտավ դեկաբրիստական մի շարք փաստաթղթերի և ասույթների մեջ: Իրենց ազատութեան համար «փոքր» ազգութեունների Ռուսաստանի դեմ վարած պայքարի վերաբերմամբ բուրժուանացիտանալիստական վերաբերմունքի այդ նույն նոտաները մենք կգտնենք նաև Պուշկինի վաղ պոեմներում («Կովկասյան գերի»): Հիշեցնում եմ, վոր «Клеветникам России» վոտանավորի տրամադրութեուններին մոտ տրամադրութեուններ մենք Պուշկինի մոտ տեսնում ենք նաև նրա վաղ տարիներում: Այսպես, «Графъ Олизару» ուղերձի սկզբում (1824 թ.) Պուշկինը հի-



շում է, վոր «մինք (ուսմներս) Կոստյուշկոյի դրօշակների գեղեցկությունը արյունոտ հողի մեջ արօրեցինք»։ Սյտեղ նույն միտքն է, ինչ վոր է «Классикам России» վոտանավորում, — «հնուց մերցեղերը միմյանց թշնամի են», և այտեղ ել լեհը «Ռուսաստանի ազգային թշնամին է»։ Յեվ միայն «հրաշալի պոեզիայի ձայնը բարեկամացնում է թշնամական սրտերը», — հարկավոր է գտնում Պուշկինը պատճառաբանելու իր բարեկամական հարաբերությունները դեպի Ուրալը, վորպես «բանաստեղծի»։

Վերջիվերջո այժմ վոչ վոք չի կասկածում, վոր «Յերկրորդ» շրջանի Պուշկինին, թե «կործանման ուղիով» ընթացող Պուշկինին մինք ըմբռնում ենք վորպես իր ստեղծագործական ույժերի կատարյալ ծաղկման մեջ գտնվող գեղարվեստագետի, իր սքանչելի կատարյալ յերկերով, վորպես իր ույժերի և բանաստեղծական հնարավորությունների աճման վիճակում գտնվող գեղարվեստագետի։ Հենց «կործանման ուղու վրա» գտնվող Պուշկինն է ընթանում դեպի ռեալիզմը և ուստական կլասիկ արձակի փայլուն զարգացման սկիզբն է դնում։

«Յերկրորդ շրջանի» Պուշկինին «կործանման», «լակեյության» նշանով, վոր նրա «ստեղծագործության միջուկն է» թափանցում, մեկնաբանելն ու դրանով իսկ պատանի տարիների և նրա վաղ յերկերի Պուշկինին վահանի վրա բարձրացնելն աղավաղում է Պուշկինի ետետիկական ըմբռնման մեր գիծը։ Դա մեզ ստիպում է մեր ուշագրությունը բեվեռել բանաստեղծի այն յերկերի վրա (դրանից առանձնապես Պասավում է դպրոցը), վորոնք բոլորովին ել նրա



հանճարի լրիվ արտահայտությունը չեն հանդիսա-  
նում: Մյուս կողմից հասուն Պուշկինի սքանչելի յեր-  
կերն այդ մոտեցումն ստիպում է ըմբռնել բռնու-  
թյուն գործ դնելով մեր աշխարհայացքի վրա կամ  
ընդունել Պուշկինին բուրժուա-եւստետիկական ըմբռ-  
նումով լոկ վորպես «գեղարվեստագետի»:

## VI

Պուշկինի կյանքն ու ստեղծագործությունը չեւրո-  
պական պլանով իմաստավորելը կոզնի մեղ պուշկին-  
յան պրոբլեմը լուծելու համար կանգնել ավելի ճիշտ  
ճանապարհի վրա, քան այն, վորտեղ խոսքը բացառա-  
պես Պուշկինի ուսական «պայմանավորվածության»  
մասին է: Մենք չենք խոսում Պուշկինի վրա չեղած  
գրական ազդեցությունների մասին՝ ֆորմալիստա-  
կան, կոմպարատիվիստական կամ պատմա-կուլտու-  
րական պլանով, այդ «ազդեցությունները» բավակա-  
նաչափ հաշվի են առնված: Բայց նրանք վերցրած  
առանձին, Պուշկինի առանձին մտքերի, նրա առան-  
ձին յերկերի նկատմամբ, միայն գրական պլանով,  
հեռանկար չեն տալիս: Այդ «ազդեցությունները» կա-  
րող եյին և փաստաթղթերով՝ տողը տողին դնելու,  
մի բառից մյուս բառին, մի լեզվի յերկից մի ուրիշ  
լեզվի տեկստին, տվյալ դեպքում ուսսերեն լեզվի  
տեկստին անցնելու միջոցով՝ հիմնավորված չլինել,  
բայց և աչնպես այդ «ազդեցությունները» կարող ե-  
յին լինել:

Մենք բոլորովին մտադիր չենք ժխտելու եվրոպ-  
ցիայի գոյությունը Պուշկինի քաղաքական հայացք-



ներում: Ավելին՝ այդ եվուլուցիայի ընթացքում մենք  
 ընդունում ենք Պուշկինի վորոշ «աջանալը», այնքան  
 վորքան դեկաբրիստների ապստամբութեան ջախջա-  
 քումից հետո այդ աջանալը ուսական իրականու-  
 թեան համար ընդհանուր յերևույթ եր: Բայց մենք  
 հնարավոր չենք համարում այդ յերևույթն այդքան  
 պինդ կապել Պուշկինի բացառապես դեպի ուսական  
 իրականութեանն ունեցած վերաբերմունքի հետ:  
 Մյուս կողմից, չչօփազանցնելով (և չնվազեցնելով)  
 այդ «աջանալու» չափն ու բնույթը, մենք Պուշկինի  
 «յերկրորդ շրջանում» տեսնում ենք վոչ թե նրա  
 «կուլտուրական ու քաղաքական մակարդակի» իջե-  
 ցում, այլ ընդհակառակը՝ ընդհանուր հսկայական աճ,  
 աճ վոչ միայն Պուշկին-դեղարվեստագետի, այլ և  
 Պուշկին-մտածողի: Իր անավարտ բանաստեղծական  
 մտահղացումներով հասուն Պուշկինը, ուսական և  
 յեվրոպական իրականութեան այն հասկացողութեամբ,  
 վոր նա ունի, կանգնած եր մեծ նվաճումների նա-  
 խորջակին, վորոնցից մեզ զրկեց բանաստեղծի վոդ-  
 բերդական մահը:

Պուշկինը մինչև իր կյանքի վերջը շարժման մեջ  
 եր: Ինչպես վոր նրա մասին ասել ե ն. Ստանկեվի-  
 չը Յա. Նեվերովին գրած նամակում (1837 թ.) «Հան-  
 գրաստութեանը նրա համար չի, ըմբոստ ապրեց և  
 ըմբոստ ել մեռավ»: Մենք չենք կարող գրադվել  
 գուշակութեաններով, թե Պուշկինն ինչ դիրք կբռ-  
 ներ հասարակական վերելքի նոր ալիքի, նոր դեմոկ-  
 րատական ինտելիգենցիայի հանդեպ, վորի նախա-  
 հայրն արդեն պուշկինյան օրերում հանդիսացավ Բե-  
 լինսկին: Բայց հետաքրքրութեան դեպի ուսական



հասարակականության այդ նոր յերևույթը Պուշ-  
կինն ուների Դեռևս 1834 թ. նա ուղնուչինցիների  
մասին գրում է, «Ազնվական դասին չպատկանող  
մեր գրողները չափազանց փոքրաթիվ են: Չնայած  
դրան, նրանց գործունեությունը տիրել է գրակա-  
նության այն բոլոր ճյուղերը, վոր մեզ մոտ գոյու-  
թյուն ունեն: Դա կարևոր նշան է և անպայման կա-  
րելիոր հեռևանքներ կունենա»: Իսկ 1836 թ. նա խըն-  
դրում է իր մտերիմ բարեկամ Պ. Վ. Նաչչովինին  
«Современник»-ի մի որինակն ուղարկել Բելինսկուն և  
ասել նրան, թե «ցավում եմ, վոր նրա հետ չտեսնը-  
վեց»:

Հաղիվ թե հնարավոր է բնութագծել Պուշկինի սո-  
ցիալ-քաղաքական հայացքները վորպես ավարտված  
և ներդաշնակ ամբողջական սխառեմ: Բայց նրանց  
շարժման և գոյացման գծերը նշելու փորձն ինձ ան-  
հուսալի չի թվում:

Յեվրոպական «չերիտասարդի» համար, վորը ծըն-  
վել է XVIII-XIX դ. դ. սահմանին, յեթե նա իր  
չերիտասարդության սոցիալական և կուլտուրական  
պայմաններով կապված է այն հասարակական խըմ-  
բակցությունների հետ, վորոնք այս կամ այն չափով  
«պատմություն ելին ստեղծում»,—վճռական, աշխա-  
րահայացք վորոշող մոմենտ եր հանդիսանում վերա-  
բերմունքը դեպի այն գաղափարների ու փաստերի  
շրջանը, վորոնք նախապատրաստեցին Ֆրանսիական  
հեղափոխությունը և միաժամանակ նրա ծնունդն  
ելին: Յեվրոպական առանձին յերկրներ առավել կամ  
նվազ չափով ներդրավել ելին հեղափոխության մեջ,  
մի յերկրի և ամենից առաջ հենց իրեն Ֆրանսիայի  
«չերիտասարդներն» իրենց սեփական փորձով վերապ-



քեցին հեղափոխության աստիճանական անկումը։ Մյուս յերկրների յերիտասարդ սերունդն ապրում եր միայն այդ մեծ սոցիալական տեղաշարժի ուղղակի կամ կողմնակի «արտացոլումը», տեղաշարժի, վորի եպիկենտրոնը Ֆրանսիան եր։ Նույնիսկ Ռուսաստանը, վոր գտնվում ե Յեվրոպայի հեռավոր արևելքում, ներգրավվեց Յեվրոպայի ժողովուրդի պայքարի մեջ։ Նապոլեոնի լեգեոնների հետ միասին Ռուսաստան հասավ հեղափոխական ծովի վերջին թույլ ակիքը միայն, և պատմությամբ Ալեքսանդր I-ին եր վիճակված դառնալու «որենքի» և «կարգի» վերականգնողը Յեվրոպայում։

XIX դ. առաջին տասնամյակների ուս կուլտուրական յերիտասարդությունը, գլխավորապես ադնըրվական յերիտասարդությունը, դաստիարակված «լուսավորության դարի» գաղափարներով և արվեստով, պատմության ամբողջ ընթացքում պետք ե ուսական իրականությունը ևս դիտեր Արևմուտքում կատարվող դեպքերի նշանի տակ և այն գաղափարների լույսով, վորոնք իրենց սկզբնական ձևակերպումն այնտեղ եյին ստացել։

Յերիտասարդ Պուշկինի լիցեյական և հետլիցեյական պետերբուրգյան տարիների քաղաքական հայացքները, ավելի շուտ և ավելին ճիշտ—տրամագրությունները կազմվում են լուսավորության դարի, գլխավորապես Ֆրանսիական գաղափարների և գեղարվեստական զրականության նրա վրա դործած ազդեցության տակ։ Այստեղից՝ «հանդիդի հայրը—նրա ամեն ինչն ե, ամեն տեղ մեծ ե միակ ձերունին», նա—«միակ մարդն ե», վորին «Ֆրանսիայում



աստված եյին համարում», Վոլտերի մեծության  
աստվերը — պատանի Պուշկինի համար — ընկալ նաև  
Տիադիշչևի վրա, վորին Վոլտերը «հենց ժպտուն հա-  
յացք պիտի ձգեր»: Այստեղից՝ «աշխարհի համար ու-  
ղում եմ ազատություն չերգել, դահերի վրա արատն  
հարվածել»: «ВОЛННОСТЬ», որայում Պուշկինը XVIII դ.  
լեղվով և տոնով հեղափոխական տիրազներ և հորի-  
նում, «Աշխարհի բռնակալներ, դողացե՛ք... Յեկե՛ք,  
ընկած ստրուկներ»: «Բանականությունը» ֆրանսի-  
ական հեղափոխության դեռևս միայն նախագուշակը  
վողեորեց պուշկինյան հորդորները թազավորներին.  
«առաջիններ, գլխով խոնարհվեք որենքի հուսալի հո-  
վանու տակ և դահի հավիտենական պահակ կլինեն  
ազգերի ազատությունն ու խաղաղությունը»: Լու-  
սավորության դարի նույն բանականությունն և լըս-  
վում և պատանի բանաստեղծի յերազանքներում  
«ցարի ձեռքի շարժումով» ստրկությունն արտաքը-  
սելու մասին:

Պուշկինի այս քաղաքական դեկլարացիաները  
կոնկրետ չեն: Յեթե նրանք ներգործում եյին դեկար-  
րիստների ջրջաններում, ապա դա միայն վկայում  
ե դեկարրիստների վաղ շարժման բնույթը, հեղափո-  
խական դադափարների ըմբռնման խորության չափը  
ծայրամասերի յերիտասարդության կողմից, վոր շըր-  
ջապատում եր դեկարրիստական կազմակերպություն-  
ների կմախքը, վորից հիմնական կադրերն, ի հարկ ե,  
իրենց հեղափոխական աշխարհայացքը պուշկի-  
նյան վոտանավորների վրա չեյին կառուցում: Միև-  
նույն ժամանակ պետք և մեծ սահմանափակումով  
հավատ ընծայել այդ բոլոր ցուցումներին Պուշկինի



պատանեկական հեղափոխական յերկերի ոեալ ներ-  
գործոնության վերաբերյալ:

Յեթե պուշկինյան հեղափոխական վաղ արամադը-  
րությունների և ասույթների իմաստն ու տոնը  
թարգմանենք յեվրոպական լեզվով, ապա կարելի է  
ասել, թե նրանց մեջ մենք գործ ունենք այն Պուշկինի  
հետ, վոր հեղափոխությունն իմաստավորել և ընդու-  
նել է միայն նրա դեկլարատիվ կողմով, միայն մին-  
չեւ 1789 թ. և 1789 թվի հետ միասին, միայն մին-  
չեւ Կոնվենտի դարաշրջանը:

Դժվար է ասել, թե իրոք յե՛րբ և ի՛նչ ազդեցու-  
թյունների տակ Պուշկինը վերանայում է իր պատա-  
նեկական արատրակտ հեղափոխականությունը և ընդ-  
հանուր ֆորմուլաների մեջ կոնկրետ բովանդակու-  
թյուն դնում: Բայց արդեն 1820 թ. «Չաղակին»  
ուղերձում նա խոսում է «անցածի», իր անցյալի  
մասին, վորից ազատագրվել է. «Վաղձեց է, վոր յե-  
բխոսասարդ հիացմունքով յես մտածում էյի ճակա-  
տագրական անունը մատնել այլ ավերակների»: Իսկ  
1821 թ. «Չաղակին» ուղերձում նա արդեն կատա-  
րյալ վստահ ու հանգիստ տոնով հայտարարում է.

В уединении мой своенравный гений  
Познал и тихий труд, и жажду размышлений,  
Владею днем моим; с порядком дружен ум;  
Учусь удерживать вниманье долгих дум;  
Ищу вознаградить в объятиях свободы  
Мятежной младостью утраченные годы  
И в просвещении стать с веком наравне.



Հենց այդ տարիներին հլ կյուխելքեկերի մակա-  
նունը՝ Անախարսիս կլոոցա «աշխարհի քաղաքացի»,  
Պուշկինի շուրթերում հնչում ե հեզնորեն:

1819 թվից շուտ Պուշկինը չեր կարող Անդրեյ Շենյեյի  
պոեզիայի և կյանքի պատկերի հետ մոտուց ծանո-  
թանալ, յերբ լույս տեսավ Ֆրանսիական հեղափո-  
խության բանաստեղծի վոտանավորների առաջին  
հրատարակությունը: Ա. Շենյեն գլխատվեց 1894 թ.  
հուլիսի 25-ին, տերմիդորյանական հեղաշրջման նա-  
խորդակին, Ռոբեսպիլերի գլխատումից միայն չերեք  
որ առաջ: Նրա պոեզիան, վոր ջախջախված ժիրոն-  
դիստների գաղափարների և տրամադրությունների  
արտահայտությունն էր, հեղափոխության հայտա-  
բարած «ազատության» ընդունման և միաժամա-  
նակ դեպի նոր «բռնակալները» (չակորյանները) տա-  
ծած առեւտրական պոեզիան, համակված էր ուղիւնչա-  
ցիայի և չուրատեսակ մելանխոլիայի տոներով: XVIII  
դ. վերջի և XIX դ. սկզբի մեծ ցնցումների մթնո-  
լորտում վաղաժամ «ոռմանտիկ» պոեզիան, հեղա-  
փոխական իրականության հակասական ներըմբռնման  
պոեզիան, մոռացված էր: Բաց օհստավրացիայի դա-  
րաշրջանում, այն ժամանակ, յերբ բուրժուազիան  
վերսկսում էր սլաչքարը «հին կարգի» դեմ, նոր սո-  
ցիալական պարազաներում, բուրժուազիայի կողմից  
իր վոչ վաղուցվա հերոսական անցյալի «պատմական»  
վերանայման և վերագնահատման տրամադրություն-  
ներում Ա. Շենյեյի «ոռմանտիկական» պոեզիան հնչեց  
վորպես ժամանակակցի ձայն: „Le Conservateur litteraire“  
լեզիտիմիստական գրական ժուռնալում, վոր Հյուզո  
լեզբայրները հրատարակում էին 1819- 1820 թ. թ.



և վոր ըստ ժամանակի ֆրանսիական ռոմանտիզմի առաջին ժուռնալն եր, հենց առաջին համարում Ա. Շենյեյին մեծ հողված նվիրվեց, ստորագրված Վ. Հյուգոյի յեղբայրներից մեկի (Յեվգենիի) անվան սկզբնատառով: Կրկնում ենք. Ա. Շենյեյի պոեզիան 1819 թ. այնքան համահնչյուն հանդիսացավ դարաշրջանի «ռոմանտիկական» տրամադրություններին, վոր պատրաստ եյին նրա յերկերի հրատարակիչներին մեղադրել միստիֆիկացիայի մեջ, պատրաստ եյին հասկածելու, վոր Ա. Շենյեյին նրանք են «ստեղծել», ինչպես վոր ավելի ուշ Սենտ-Բեֆն «ստեղծեց» իր Ժ. Դելորմին: Հետաքրքիրն այն է, վոր Ա. Շենյեյին, վորպես բանաստեղծի, Պուշկինի տված գնահատականը հիմնականում զուգադիսպոստ է „Le Conservateur littéraire“ ժուռնալի գնահատականին: Այսպես Պուշկինի ֆրազը— «բայց նա կլասիկներից կլասիկ է— նրանից բուրում է հին հունական պոեզիայի բույրը»— զուգահեռներ է գտնում Հյուգո յեղբայրների ռոմանտիկական ժուռնալի հողվածում (Շենյեյի իդիլիաներն աչքի չեն ընկնում այնպիսի արժանիքներով, վորոնք «բնորոշում են անտիկ պոեզիան»), Շ.— դաստիարակված անտիկ մուսաների շրջանում և այլն):

Մինչև Ա. Շենյեյի գրվածքների լույս տեսնելը 1819 թ. Պուշկինը նրա մասին կարող եր իմանալ Շատորիանից: Չի բացասվում և այն հնարավորությունը, վոր Ռուսաստանի հարավում թափառելու տարիներին, Ուեսսայում կարող եր Պուշկինի ձեռքն ընկնել նաև ֆրանսիական ռոմանտիկ-լեզիամիստ-



ների ժուռնալը (Թեկուզ և Վորոնցովի գրադարանում):

Մեզ համար կարևոր և մատնանշել, վոր Ա. Շենյե «բանաստեղծի» պատկերը Պուշկինի և՛ քաղաքակառուցության և՛ նրա «նոմանտիզմի» պատմութեան մեջ, «արվեստի և գեղարվեստագետի ազատութեան» նրա ուսմանտիկական տեսութեան ձևավորման մեջ ավելի կարևոր նշանակութեուն և ունեցել, քան սովորաբար ընդունված և կարծել:

Կասկած չկա, վոր 1825 թ. Ա. Շենյեի պատկերը մտավ Պուշկինի գիտակցութեան մեջ վորպես իրեն հարազատ և մտտիկ մարդու պատկեր:

Նշանակալից և այն, վոր հենց 1825 թ. են վերաբերում Պուշկինի մի շարք ասույթները Ա. Շենյեյի մասին և մասնավորապես իր անձնավորութեան նմանեցումը Ֆրանսիայի բանաստեղծի անձնավորութեանը: Այսպես որինակ, Վյազեմսկուն գրած նամակում (սեպտեմբեր 1825 թ.) Պուշկինը կրկնում և իր վերաբերմամբ, լեզենդայով Ա. Շենյեյին վերագրված, իրր թե մահվանից առաջ նրա արտասանած ֆրազը «Յես ել,—գրում և Պուշկինը,—կարող եմ գլխիս խրփել և ասել il y avait quelque chose là»<sup>1)</sup>: Իսկ Պ. Ա. Պլետնյովին գրած նամակում (1825 թ. դեկտեմբերի առաջին կիսում) նա, անկասկած, խոսում և իր «Անդրեյ Շենյե» վոտանավորի մասին, յերբ պատթեթիկ ձևով բացականչում և. «Միրելիս, չես մարզարեյսմ, աստված վկա, մարզարեյ չեմ: Յես Անդրեյ Շ.—ն կը-

---

1) Սակայն այստեղ բան կար:



հրամայեմ տպել յեկեղեցական տառերով հանուն  
Հ[ոբ] և Վ[ոբ] [դվո]»:

Նշանակալից ե իր ճակատագրի և Ա. Շենյեյի  
ճակատագրի նմանեցումը, վոր Պուշկինն անում ե  
1826 թ. մայիսի վերջին թվերին Վյազեմսկուն գրած  
նամակում, արդեն դեկարրիստների ապստամբու-  
թյունից հետո, «Ավելի չերջանիկ, քան Անդր. Շեն-  
յեն—յես կենդանի լում եմ վոզեվորության ձայ-  
նը»:

Պուշկինի այս բոլոր ասույթներն Անդրեյ Շենյե-  
յի մասին տեղի չեն ունեցել դեկարրիստների ապրա-  
ստամբության նախորդակին և նրանից հետո: Ուստի  
մեզ թվում ե, վոր «Անդրեյ Շենյե» վոտանավորի  
(1825 թ.) բովանդակությունն ու տոնը հատկանշա-  
նական իմաստ ունեն այդ որերի Պուշկինի համար.  
այդ վոտանավորը կարծես Պուշկինի դեկլարացիան  
լինի՝ քաղաքական և բանաստեղծական:

Ինքնակենսագրական պլանով վոտանավորի մեջ  
հետաքրքրական ե Պուշկինի հայտարարությունը ա-  
ռաջին տներում, վոր նրա բանաստեղծական գիտակ-  
ցության մեջ Ա. Շենյեն կարծես փոխարինել ե Բայ-  
րոնին («մինչդեռ... աշխարհը Բայրոնի աճյունին ե  
նայում... կանչում ե ինձ մի այլ ուրվական»):

Իսկ վոտանավորի քաղաքական բովանդակությու-  
նը յերևան ե գալիս յերկու ուղղությամբ: Մի կող-  
մից Ա. Շենյեն հավատարիմ ե ֆրանսիական հեղա-  
փոխության հայտարարած ազատարար սկզբունքնե-  
րին.



...Лира юного певца  
О чем поет? Поет она свободу:  
Не изменилась до конца!

*Բանաստեղծը վողջունում և ազատության «սըր-  
բազան վորոտը», նրան և «փառաբանում».*

Когда он разметал позорную твердыню  
И власти древнюю гордыню  
Развеял пеплом и стыдом...

*Նա հիշում և.*

Закон,  
На вольность опершись, провозгласил равенство,  
И мы воскликнули: блаженство.

*Բայց ցանկալի ազատության այդ հաղթանակին  
բանաստեղծը հակադրում և այն իրականությունը,  
վորը լեկավ փոխարինելու հեղափոխության առաջին  
որերի «յերանությանը».*

О горе! О безумный сон!  
Где вольность и закон? Над нами  
Единый властвует топор.  
Мы свергнули царей. Убийцу с палачами  
Избрали мы в цари. О ужас! О позор!

*Բանաստեղծին կորուստ և սպառնում, բայց նա  
հպարտանում և և ուրախանում, վոր*

...не поник главой послушной  
Перед позором наших лет.

*Իր քաղաքացիական արժանիքն և համարում այն,  
վոր յերգեց Շարլոտա Կորդեյի, Մարատին սպանողի  
«սխրագործությունը».*



...пел Маратовым жрецам  
Кинжал и леву Эвмениду!

Բանաստեղծի այս յերկզիմի հակասական վերաբերմունքը դեպի հեղափոխությունը լուծվում է մի կողմից անեծքներով «մոլեգնած արևոպագոսի» (Կոնվենտի) հասցեյին, անեծքներով Ռոբեսպյերի հասցեյին և գուշակությամբ:

Падешь, тиран!

Теперь иду... пора... но ты ступай за мною,  
Я жду тебя.

Մյուս կողմից, բանաստեղծը հավատարիմ է մնում աղատությանը:

Но ты, священная свобода,  
Богиня чистая, нет, не виновна ты,  
В порывах буйной слепоты,  
В презренном бешенстве народа,  
Сокрылась ты от нас...

.....

Но ты придешь опять...

Հեղափոխական փոթորիկների վողբերգական հակասություններում կործանվում է յերիտասարդ բանաստեղծը, հավատարիմ «սիրո, վոտանավորներին և լուսթյանը», հավատարիմ «բարեկամությանը», վորը «կթովի բանաստեղծի մահվան ուղին»:

Ա. Շենյեյի այդ բանաստեղծական կենսագրության մեջ, վոր արտաքնապես զուգադիպում է նրա իսկական կյանքի փաստերին, Պուշկինը մտցրել է տրամադրություններ, վոր բնորոշ են ռեստավրացի-



այի դարաշրջանի ֆրանսիական ումանատիզմի համար:

Անցյալ դարի 20-ական թվականներին Ֆրանսիայում վոչ միայն և վոչ այնքան այն պատճառով Ա. Շենյեյին ընդունեցին վորպես «ժամանակակցի», վոր նա համահնչյուն էր ումանատիզմի դարաշրջանի գրական ճաշակներին, այլ նախ և առաջ այն պատճառով, վոր նրա պատկերը, նրա պոեզիայի և կյանքի քաղաքական բովանդակությունը համապատասխան էին բուրժուազիայի քաղաքական հայացքներին, վոր պայքարում էր ռեստավրացիայի դարաշրջանում նորից ամրացած «հին կարգի ամոթալի ամբողջյան դեմ»:

Արդիականության համար ֆրանսիական հեղափոխության ինչպիսի ըմբռնում և քաղաքական ինչ ծրագիր են պարունակվում Ա. Շենյեյի պուշկինյան բանաստեղծական կենսագրության մեջ: Ընդունումն XVIII դ. հեղափոխության, նրա առաջին որերի և ժխտումն Կոնվենտի դարաշրջանի հեղափոխության, ընդունումն 1789 թ. հեղափոխության և ժխտումն, անեծք 1793 թ. հեղափոխության: Առաջինը մեծագույն պատմական թվական է, յերկրորդը՝ մի դաժան, ծանր պատմական սխալ, վոր կատարել է ժողովրդի կատաղությունը մոլեգին կուրության պոռթկումների պահին:

XVIII դ. վերջի լեզվով դա ժիրոնդիստների ծրագիրն է, անեծքներով, ուղղված Մարտտին, Ռորեսպլերին և որհնանքներով—Շարլոտա Կորդեյին, դա միապետության հետ համաձայնության գալու ծրագիր է. XIX դ. 20-ական թվականների լեզվով դա ռեստավ-



բացիայի դարաշրջանի լիբերալ բուրժուազիայի ծրագիրն է, վորը չեր խուսափի 1789 թ. կրկնելուց, բայց վորը կրակից ավելի վախենում եր 1793 թ. կրկնվելուց: Այստեղից եր ըզխում Ֆրանսիական վաղ ուսմանտիղմի ոեղինյացիան, մեղանխողիան, այստեղից ե՛ր չերկդիմի վերաբերմունքը դեպի Նապոլեոնը, վորը, թեև «մոլեգին կուրությանը» վերջ ավեց, միաժամանակ լեզիտիմական թագավոր չեր, այլ հեղափոխության վորդի, թեև կայսեր պատվավոր տիտղոսով:

Անցյալ դարի 20-ական թվականների ոուսական իբականության պայմաններում «Անդրեյ Շենյե» ելեգիան Պուշկինի համար հնչում է «մարգարեարար», — հիշեցեք նրա հայտարարությունն իր վոտանավորի մասին Պլետնյովին գրած նամակում: Յե՛վ գուցե՞ ոուս բանաստեղծը «զլխատումն» իր համար հնարավոր եր համարում է՝ աջից է՛ ձախից: Կարելի չեր «Անդրեյ Շենյեյի» քաղաքական բովանդակությունը համեմատել դեկարրիստական շարժման սուղիկինյան ըմբռնման հետ, դեպի այն ունեցած վերաբերմունքի հետ:

Իայց մենք ուզում ենք կանգ առնել մի ուրիշ բանի վրա: Մենք պետք է մատնանշեյինք, վոր Պուշկինն իր դեմքը վորոշում է արևմտացեվրոպական իրականությամբ, համայնեվրոպական պատմական կարեվորություն ունեցող փաստերով:

Չափազանց հետաքրքիր են Պուշկինի ոեստավրացիայի դարաշրջանի ֆրանսիական ուսմանտիղմի հետ ունեցած կապերը: Այստեղ մենք, ճիշտ է, ամենից առաջ հանդիպում ենք բացասական վերաբերմունք դեպի ֆրանսիական ուսմանտիղ-բանաստեղծները՝ Լամարտինը «Յուեղից ավելի է ձանձրալի», Վ. Հյու-



գոն—«չունի կյանք, այսինքն՝ ճշմարտութուն», Ս. Վինյիի վեպերը—«Ջագոսկինի վեպերից ավելի վատ են» և այլն: «Յես սրտումս հավատացած եմ,—գրում ե Պուշկինը Պագոդինին 1832 թ. սեպտեմբերին,—վոր 18-րդ դարի համեմատությամբ 19-րդ դարը սևերես ե (ի նկատի ունեմ Ֆրանսիան): Պրոզան հազիվհազ փրկում ե զզվելիութունն այն բանի, վոր պոեզիայեն անվանում»: Հետագայի համար հիշենք պրոզայի ահա այս դատումը:

Առայժմս մենք ուզում ենք ընթերցողի ուշադրութունը բեկեռել մի այլ բանի վրա: Ֆրանսիական պոեզիայի և ֆրանսիական բանաստեղծների մասին արած այս արտահայտութուններով բոլորովին ել լրիվ չափով չի վորոշվում Պուշկինի վերաբերմունքը դեպի ռեստավրացիայի դարաշրջանի ֆրանսիական ոտմանտիգմը: Ֆրանսիական ոտմանտիգմը բոլորովին չի պուզադիպվում անցյալ դարի սկզբի ֆրանսիական պոեզիային:

Պուշկինի 1836 թ. հոդվածում՝ «Մ. Յե. Լոբանովի կարծիքը ինչպես ոտարեկրյա, այնպես ել հայրենի գրականության վոգու մասին», մենք կարդում ենք վոր ֆրանսիական ժողովուրդը «այժմս ել հպարտանում ե Շատոբրիանով և Բալանշով»:

Մենք չենք խոսի այն բանի մասին, թե վորքան Պուշկինի ցուցմունքը ֆրանսիական «ժողովրդի» մասին համապատասխանում եր իրականության: Բայց իրեն Պուշկինի համար այդ անունները խիստ հատկանշանական են:

Թե ո՞վ ե Շատոբրիանը, մենք բոլորս լավ գիտենք: Շատոբրիանը լիզիտիմիստ եր, բայց ընդունում եր



1739 թ. Ֆրանսիական հեղափոխութեան հաշտարարած «ազատութեաններէ մեծ խարտիայի» հիմնական սկզբունքները, Շատորրիանը Ֆրանսիական առաջին արձակագիր-նոմանտիկն է, Ֆրանսիական ռոմանտիկներէ աջ թևի բանաստեղծական ներշնչողն է: Պուշկինի համար Շատորրիանը «Ֆրանսիական ժամանակակից գրողներից առաջինն է, ամբողջ գրող սերնդի ուսուցիչը»: 1836 թ. բնութագրելով «գերկոմս» Շատորրիանին, Պուշկինը, պիտի յենթադրել, անդրադառնում է և իրեն, յերբ ասում է. «Ժերութեան հասակում Շատորրիանը մի կտոր հացի համար թարգմանեց Միլտոնին... Նա, ով մի փոքր ինքն իր հետ սակարկելով, կարող էր հանդիստ ոգտվել նոր կառավարութեան, իշխանութեան առատաձեռնութեամբ, պատիվներով ու հարստութեամբ, այդ բոլորին գերադասեց ազնիվ չքավորութեանը... Շատորրիանը գալիս է գրախանութ ծախու ձեռագրով, բայց անկաշառ խղճով» և այլն: Պուշկինի գրադարանում պահպանվել է Շատորրիանի չերկերի լրիվ հավաքածուն:

Առանձնապես հետաքրքիր է այն, Վոր Պուշկինը Շատորրիանի կողքին դնում է Բալանշի անունը:

Ո՞վ է Բալանշը: Պ. Բալանշը (1776—1847), ներկայումս հիմնավորապես մոռացված, ռեստավրացիայի դարաշրջանում և հուլիսյան միապետութեան առաջին տարիներին Ֆրանսիական ռոմանտիկների մեջ հրակայական ժողովրդականութուն էր վայելում: Նրա ձևով քմահաճ աշխատութունները, միատիկացի սիմբոլիկայով, թեոսոփիայի խառնուրդով, ուտոպիական սոցիալիզմի չերազականութեան արձագանքներով համակված, բոլորն էլ նվիրված են համամարդկային



«տոյիալական վերածնութեան» («Palingénésie sociale») հարցին: Բալանշը հարցը դնում և լուծում է միշտ «պատմականորեն»: Կենտրոնական պատմական մոմենտը, վորին վերադառնում է Բալանշի դարերի և հազարամյակների վրայով թափառող ֆանտազիան, հանդիսանում է ֆրանսիական հեղափոխութեանը: Բալանշը հավատում է պրոգրեսին, վերածնութեանը, նրա վերաբերմունքը դեպի հեղափոխութունը յերկդիմի յե—ընդունում է 1789 թ. սկզբունքները և ժխտում է 1793 թիվը: Բալանշը լեզիտիմիստ է, տերրորի դարաշրջանի «գլխատումների և բռնութեան» թշնամի, և նրա գրքերից մեկը՝ «Անանուն մարդը» («L'homme sans nom», 1820)—ամբողջովին նվիրված է «արքայասպանի» խղճի տանջանքների նկարագրութեանը (Կոնվենտի անդամի, վոր քվեարկել էր հողուտ Լյուդովիկոս XVI մահապատժի):

Բոլոր ֆրանսիական գրողներից այդ յերկու ուժանտիկ-լեզիտիմիստների, Շատոբրիանի և Բալանշի գատումը հատկանշական է վոչ այնքան ֆրանսիական գրականութեան համար, վորքան իրեն 1836 թ. Պուշկինի համար:

Ա. Շենյեյի պատկերը, վոր Պուշկինը տվել է 1825 թ., պուշկինյան վերաբերմունքը դեպի ֆրանսիական հեղափոխութունը վորոշ չափով զուգադիպում են ֆրանսիական հեղափոխութեան Շատոբրիանի և Բալանշի ըմբռնմանը:

Մեզ համար կարևոր է մատնանշել, վոր 1836 թ. ևս Պուշկինին մտա էր անունների (և գաղափարների) այն շրջանը, վոր բնորոշեց նրան 1825 թ.: Յեթե գաղափարների այդ շրջանը 1825 թ. նրան դնում էր դե-



պի աջ դեկարրիստների ամենահեղափոխական խմբակներէց, յեթե 1836 թ. ևս արդեն նոր հասարակական միտք եր ծնունդ առնում, վորը շուտով պուշկինյան լիբերալիզմից ավելի հեռուն գնաց (Բելինսկի, Գերցեն և ուրիշները), ապա դա մեզ դեռ ևս վոչ մի իրավունք չի տալիս խոսելու Պուշկինի «հետադիմակա՜նության» մասին, նրա «սերվիլիզմի» և «լակեյության» մասին և առավել ևս բացասում ե Պուշկինի տաղանդի ծաղկման հարցը նրա աշխարհահայացքից դուրս, անկախ դնելու հնարավորությունը:

## VII

Յեթե պատանի Պուշկինը «ազատություն» և «որենք» եր յերգում XVIII դ. լուսավորական փիլիսոփայության տոներով, 1789 թ. հեղափոխության սկզբունքներով, ապա հասուն Պուշկինը մոտ ե «ազատության» և «որենքի» ռեստավրացիայի դարաշրջանի ֆրանսիական բուրժուալիբերալների ըմբռնողությանը: Պուշկինի կապերը ֆրանսիական ռոմանտիզմի հետ ընթանում եյին վոչ միայն «գրական» գծով: Ֆրանսիական ռոմանտիզմից Պուշկինը, — և դա առանձնապես կարևոր ե, — յուրացրեց «պատմական» մտածողություն: Տվյալ մոմենտում մենք չենք կարող մանրամասնորեն լուծել այն հարցը, թե Պուշկինը չեբբ և վորտեղ յուրացրեց ռեստավրացիայի դարաշրջանի ֆրանսիական պատմաբանների դադափարները, բայց մեզ համար անկասկածելի ե, վոր «Յեվգենի Ոսեդինի» վոչնչացրած 10-րդ գլուխն ստեղծելու ժամանակ «Բորիս Գոդունովի» հեղինակը, Պուշկինը վոչ միայն կարամզինի աշակերտն ե հանդիսանում, այլ և Գիլգո-



լի և ֆրանսիական մյուս պատմաբանների, ռեստավրացիայի դարաշրջանի բուրժուական սոցիոլոգներին աշակերտը:

Գիզոյի պատմականության Պուշկինի ներըմբռնումը նախապատրաստված եր այն գաղափարների շրջանով, վոր դալիս են տիկին դե—Ստալից և Բենժամեն Կոնստանից:

Իր ծագման ժամանակի համար բուրժուական «պատմականությունը» պրոգրեսիվ յերևույթ ե, և մարքսիզմի հիմնադիրներն ընդունում եյին բուրժուական պատմաբան-սոցիոլոգների արժանիքները: Բուրժուական պատմականությունն աշխարհահայեցողական կարգի լայն յերևույթ ե, նրա մեջ կային պատմական պրոցեսի որինաչափություններն ըմբռնելու ձգտումներ, նրա մեջ կային, ճիշտ ե սահմանափակ, մատերիալիստական տենդենցներ: Յեթե այդ տենդենցները բոլորովին չմեռան նույնիսկ Ի. Թենի մոտ, ապա դրանք կային և՛ Գիզոյի և՛ Ո. Թիերի մոտ, վոր ռեստավրացիայի ժամանակ գիտության լեզվով, պատմության լեզվով, նրա փաստերով պայքարում եյին հին կարգի դեմ: Բուրժուական պատմականության մեջ կային կոնկրետության, իրականության ճանաչողության, ազգային յուրահատկության դրսևորման ձրգտումներ:

Բուրժուական սոցիոլոգիզմի արձագանքները մենք կգտնենք Պուշկինի մի շարք ասույթներում: Ահա որինակ, նրա դատողությունը «Ժողովրդայնության մասին գրականության մեջ» (1826 թ.) «Կա մտածողության և զգացողությունների ձև, կան անթիվ սովորույթներ և հավատալիքներ, և սովորություններ,



վորոնք պատկանում են բացառապես մի վորևե ժողովրդի: Կլիման, վարչաձևը, հավատը ամեն մի ժողովրդի տալիս են առանձնահատուկ դեմք, վորն ավելի կամ պակաս չափով արտացոլվում ե պոեզիայի հայեցելում»: «Կլիմայից», «վարչաձևից», «հավատից» «պոեզիայի» կախվածության այդ դրույթը, վոր գալիս ե նոր յեվրոպական փիլիսոփայության նախահայր Բեկոնից, Մոնտեսքիոյի և XVIII դ. մատերիալիստների միջով հասնում XIX դ. սկզբի բուրժուական սոցիոլոգ-պատմաբաններին, — Պուշկինին մոտեցնում ե նաև այնպիսի սեպարատ գրողի, ինչպիսին Ստենդալն և Գիգոն Պուշկինի համար «մեծ պատմաբան ե», նա՞ նրան պաշտպանում ե Ն. Պուլեվոյից, վորը, Պուշկինի կարծիքով, միայն «խիստ զվարճալի կերպով պարուզիայի եր յենթարկում Գիգոյին և Թիերին»: Գիգոյին վկայակոչելով Պուշկինը խոսում ե Արևմտյան Յեվրոպայի պատմական զարգացման «որինաչափության» մասին, լիրերալ բուրժուական պլանով հասկացված պրոպրետի ուղիով նրա անշեղ շարժման մասին. «Գիգոն բացատրեց քրիստոնեական պատմության անցքերից մեկը՝ չեվրոպական լուսավորությունը: Նա գտնում ե նրա սաղմերը, նկարագրում ե նրա աստիճանական զարգացումը և, դեն զցելով այն բոլորն, ինչ վոր հեռավոր ե, կողմնակի, պատահական, խավար, արյունալի, ծանր ու յերբեմն ծաղկող դարերի միջով հասցնում ե մինչև մեզ» (1830—1831 թ. թ.):

Ռեստավրացիայի դարաշրջանի բուրժուական պատմաբան-սոցիոլոգներից հետո Պուշկինը դնում ե լուծում ե նոր բուրժուական Արևմտյան Յեվրոպայի գոյացման պրոբլեմը: Նա ծնվեց պայքարելով ֆեոդա-



լիզմի դեմ և ծաղկում է նրան հաղթանակելով: Պուշ-  
կինն ընդունում է այդ հաղթանակի որինաչափու-  
թյունը, անխուսափելիութունը: Նա հավատում է  
նրա բարի արդյունքներին. «Մ, վորքան հրաշալի  
հայտնագործումներ է մեզ համար պատրաստում լու-  
սավորության վոզին և փորձը...»

Այդ պլանով են ընթանում Պուշկինի այն յերկերի  
փորձերն ու չիրականացված մտահղացումները, վոր  
նվիրած են միջնադարից դեպի նոր ժամանակը, ֆե-  
ոդալիզմից դեպի բուրժուական-կապիտալիստական  
հասարակությանն անցնելու մեծ բեկման դարաշրջա-  
նին («Сцены из рыцарских времен», «Папесса Ио-  
анна»):

Բուրժուական պատմական սոցիոլոգիզմի վոզով է  
գնում Պուշկինը նաև ուսաց պատմության հարցերը՝  
Ռուսական անցյալում՝ նա ուզում է գտնել արդիա-  
կանության բանալին, ուզում է հասկանալ այդ արդի-  
ականությունը պայմանավորված անցյալով, իր պատ-  
մական որինաչափությամբ, իր պրոզեսիվությամբ:

Հիմա մենք չենք կարող գնալ Պուշկինի հետևից  
նրա ուսական պատմական անցյալի մասին արած  
բասողություններով հանդերձ:

Բայց պետք է նկատել, վոր «պատահականության»  
պուշկինյան ըմբռնումը բուրժուական սոցիոլոգ-պատ-  
մաբանների պատմափիլիսոփայության շրջանակներից  
դուրս չի գալիս, և պուշկինյան նախախնամությունը  
ֆեոդալական աստվածային Նախախնամությունը չէ  
գլխատառով, այլ պատմական որինաչափության:  
հասկացողության տերմինաբանական փոխանորդը  
Պուշկինը Պոլեվոյին բացատրում է. «..... Նախախնա-  
մությունը հանրահաշիվ չէ: Մարդկային միտքը...»



մարգարե չե, այլ գուշակող, նա տեսնում ե իրերի  
ընդհանուր ընթացքը և նրանից կարող ե խորը յեն-  
թադրութուններ անել, վորոնց հաճախ ժամանակն  
արդարայնում ե, բայց նա չի կարող նախատեսել  
պատահումներ: XVIII դ. ամենասրամիտ մարդկանցից  
մեկը գուշակեց Փրանսիական պատգամավորների կա-  
մերան և Ռուսաստանի հզոր տիրապետութունը, բայց  
վոչ վոր չգուշակեց վոչ Նապոլեոնին, վոչ ել Պոլինյա-  
կին—նախախնամության հզոր վայրկենական գոր-  
ծիքին»:

Ռուսական պատմական անցյալի կոնցիպցիայով  
Պուշկինն ուզում ե հիմնավորել իր քաղաքական հա-  
յացքները, արդիականության հարցերի լուծման իր  
ձեերը: Ենվ Ռուսաստանի նկատմամբ «նորագույն  
պատմաբանների սիստեմը» կիրառելուց հրաժարվելը  
պրոգրեսի արևմտայնվորողական բուրժուական ֆորմու-  
լայի ժխտումն չի նշանակում, այլ հանգում ե նրա  
իրականացման այլ ուղիների հաստատման, քան  
Սրևմտյան Ենվրոպայում եր:

Դեռ ևս 1822 թ. Պուշկինը գրում ե, վոր XVIII դ.  
«արիստոկրիացիան» քանիցս փորձել ե սահմանափա-  
կել ինքնակալութունը և վոր «թագավորների խորա-  
մանկութունը հաղթանակել ե ավագանիների փառա-  
սիրությանը»: «Վարչաձեը մնաց անձեռնմխելի», և  
դա, պնդում ե Պուշկինը, «մեզ փրկեց հրեշավոր ֆեո-  
դալիզմից»: «Սրիստոկրացիայի հաղթանակի դեպ-  
քում,—շարունակում ե նա,—միայն սարսափելի ցըն-  
ցումը կարող եր Ռուսաստանում վոչնչացնել արմա-  
տացած ստրկութունը, իսկ այժմ մեր քաղաքական  
ազատութունն անբաժան ե դյուղացիների ազատա-



գրումից, լավի ցանկությունը միացնում ե բոլոր դասերն ընդհանուր չարիքի դեմ, և հաստատուն, խաղաղ միաբանությունը շտտով կարող ե մեզ դնել Յեվրոպայի լուսավորված ժողովուրդների շարքը»: Յեվ յերեսունական թվականներին (1833—1835) «Ճանապարհորդություն Մոսկվայից Պետերբուրգ»-ում պնդելով թե «լուսավորության տարածման գուզընթաց գլուղացու ճակատագիրն որ ավուր լավանում ե», Պուշկինն այդ խոսքերով չի վերացնում իր ժամանակվա հիմնական պրոբլեմը՝ գլուղացիական հարցը, «գեռ ևս պետք ե մեծ փոփոխություններ կատարվեն»: Բայց, ինչպես և 20-ական թվականներին, նա խոսում ե նրա խաղաղ լուծման մասին. «ամենալավ և ամենահաստատուն փոփոխությունները նրանք են, վորոնք առաջանում են միայն բարքերի լավացումից, առանց բռնի քաղաքական ցնցումների, վորոնք մարդկության համար սարսափելի յեն»: Հարկավոր ե մատնանշել, վոր այդ տարիներում ևս, ինչպես և այն ժամանակ, յերբ նա «Յեվզենի Ոնեգինի» X գլխում հեգնում եր Ա. Տուրգենևի յերազները կալվածատերերի կողմից գլուղացիներին կամավոր ազատություն տալու մասին, Պուշկինը կասկածում ե, վոր ազնվականները պարաստակամություն հայտնեն հրաժարվելու իրենց «իրավունքներից»: Այսպես, նույն «Ճանապարհորդություն Մոսկվայից Պետերբուրգ»-ի մեջ ցիտելով Ռադիչևի «Ճանապարհորդությունը» նույնիսկ գլուղացիներին հրապարակալին աճուրդով վաճառելու մասին, Պուշկինն այդ ցիտատն վերջացնում ե այսպիսի բառերով. «Հետևում ե մի պատկեր (Ռադիչևի մոտ: Վ. Գ.), վորը սարսափելի ե նրանով, վոր հավանական ե



Ռադիշչեի հետևից յես չեմ թաղվի նրա փքուն, բայց անկեղծ յերազների մեջ, վորոնց այս անգամ ակտումայից համաձայնվում եմ...» Իսկ Պուշկինն ինչին է «համաձայնվում ակամայից»: Ռադիշչեի մոտ «Мел-ХОЕ» գլուխը, վորը ցիտում է Պուշկինը, վերջանում է հետևյալ դառն խոսքերով. «Ի՞նչը նրանք, ովքեր կարող եյին ազատությանն ոժանդակել, բոլորը ժառանգական մեծ կալվածատերեր են, և նրանց խորհուրդներից չե, վոր պետք է ազատություն սպասել այլ հենց ստրկացման ծանրությունից»:

Ռուսական իրականության հարցերը լուծելիս Պուշկինը չեր կարող պարզապես ընթանալ Փրանսիական ուսմանտիկների ուղիով: Անմիջապես Շատոբրիանի և Բալանշի հետևից գնալով, նա չեր կարող յերազել հին կարգի մասնակի ուստավրացիան, վորովհետև Ռուսաստանում դեռ ևս հեղափոխություն չեր յեղել, բայց նա հեղափոխություն չի ուզում, վորովհետև թե ուսմանտիկ լիբերալիստներից և թե բուրժուական պատմաբաններից նա դիտե, վոր 1789 թվին հետևում է սարսափելի 1793 թ., վորի ղուգակշիռը նա գտնում է նաև ուսաց պատմության մեջ (Պուգաչևիշչինա): Բայց նա իր Փրանսիական ուսուցիչներից դիտե, վոր «նախախնամության» ուղիներն անխախտելի են, վոր հին աշխարհն իր Ֆեոդալական կերպարանքով դատապարտված է, վոր Ռուսաստանում ևս նրան փոխարինելու յե գալիս «լուսավորության» և «ազատության» դարը: Յե՛վ պուշկինյան «պատմականությունը» հիմնվում է ուսական անցյալի վորոշ առանձնահատկության վրա:

Վճրն է այդ առանձնահատկությունը: Յեթե 1822 թ.



գրութիւնն, վոր ինքն եր գրել: Սուվորովն իր ազնվական ծագումը չի ր արհամարհում»:

Պուշկինն ուզում է, վորպեսզի ուսուսական «լուսավորութիւնը» զարգանա վոչ թե «վայրենութան, ստորուշիյան և սգիտութան» նշանով, վոր «անցյալը» չեն հարգում, այլ իր սոցիալական բովանդակութիւննից զուրկ ազնվական դասայնութիւնը պահպանելով: Այդպիսի «գասայնութիւնը» պարագոքսալ է և հնարավոր է միայն սոցիալական ուստոպիաներում: Բայց միթէ վեցհարյուրամյա ազնվականութեան մասին պուշկինյան գատողութիւննների վրա չկա ոտմանտիկական լերագականութեան կնիքը:

Հասուն Պուշկինը ուսական իրականութիւնը չի իդեալականացում: Այդ իմաստով նշանակալից է նրա արձագանքը Չաադակի «փիլիսոփայական նամակին»: Նա Չաադակի պատմական կարծիքներին համաձայն չէ, բայց արդիականութեան քննադատութեան մեջ նրանից հետո յե գնում և տալիս է իր քննադատութիւնը վոչ Չաադակի ուսակցիոն դիրքերից: 1636 թ. Պուշկինը մեր «սոցիալական գոյութիւնը» համարում է «ցավալի», խորհում է «հասարակական կարծիքի բացակայութեան», անտարբեր վերաբերմունքի մասին դեպի այն ամենը, ինչ վոր «պարտականութիւնն, արգարութիւնն և հշմարտութիւնն» է հանդիսանում, «խկապես անմիտութար» և համարում «ցինիկ արհամարհանքը դեպի միտքն ու մարդու արժանապատովութիւնը» և այլն:

40-ական թվականների նոր դեմոկրատական ինտելիգենցիալի ծնունդ առնելու միջոցորտում Պուշկինն արդեն չի ր ըմբռնվում վորպես «ժամանակակից»:



Նրան աջնպիսի պահանջներ ելին: առաջագրում, վո-  
րոնց Պուշկինի իմաստուն «պատմականությունը» բա-  
վարարել չեր կարող: Այդպիսի պահանջներին և,—  
մենք յենթադրություն ենք անում,— գուցե, վերաբե-  
րում մի անհայտ թղթակցի Պուշկինին հասցեագրած նա-  
մակի պահպանված հատվածը: Անհայտ և և այդ նամա-  
կի թվականը, Բայց նրա տոնն ու բովանդակություն-  
ը ավելի շատ կհամապատասխանեյին Պուշկինի վեր-  
ջին տարիներին, չերբ և՛ նրա ապրելակերպը, ըմբռն-  
ված արտաքին արտահայտություններով, և՛ նրա վեր-  
ջին տարիների յերկերը կարծես թե ընթերցողի գի-  
տակցության մեջ մթագնում եյին պատանի Պուշկինի  
ըմբոստ դեմքը:

Պուշկինի անհայտ թղթակիցն ու նրա յերկրպագուն  
դրում և նրան. «... Յերբ տեսնում ես նրան, ով պետք  
և մարդկանց սրտերը նվաճեր, ամբոխի սովորույթնե-  
րի և սովորությունների առաջ սողալիս, մարդ ճա-  
նապարհի միջին կանդ և առնում և իրեն հարց և տա-  
լիս, թե ինչու իմ ճանապարհը կտրում և նա, ով ին-  
ձանից առաջ և և վորը պետք և դառնար իմ առաջ-  
նորդը: Նման միտք և ծագում իմ գլխում, յերբ յես  
ձեր մասին եմ մտածում, իսկ ձեր մասին յես շատ  
եմ մտածում; նույնիսկ մինչ հոգնության աստիճան:  
Շնորհ արեք, թույլ տվեք ինձ անցնելու Յեթե ժամա-  
նակ չունեք մեր պահանջներն իմանալու, խորացեք  
ձեր անձի մեջ, և սեփական կրծքից վերցրեք կրակ,  
վոր անկասկած կա չուրաքանչյուր այդպիսի հոգում,  
ինչպիսին ձերն ե...»

30-ական թվականների Պուշկինը «հրաժարվեց»  
Ռադիշչևից, Վոլտերից, վորոնց յերիաասարդ հասա-



կում նա այնքան բարձր եր դասուում: Յեւ վ այս փաստը սովորաբար այն փաստերի թվին են դասուում, վորոնք ընկած են Պուշկինի «կործանման» ճանապարհին: Մենք կարծում ենք, վոր այստեղ ել պետք է խոսել վոչ թե հրաժարվելու, վոչ թե «դավաճանության», այլ այն ընդհանուր արատրակտ դրությունները ճշտելու, կոնկրետ բովանդակություն լցնելու մասին, վորոնք բնորոշ ելին պատանի Պուշկինի համար:

30-ական թվականների Պուշկինի համար և՛ վորտերը և՛ Ռադիշչևը «պատմական» չեն: Նրանք նախագուշակում և վողջունում ելին 1789 թ. և չեյին ճանաչում 1793 թ.: Այստեղից է բղխում Ռադիշչևի «յերազկոտության» պուշկինյան քննադատությունը: Մեղ համար, ի հարկե, ավելի մոտ է Ռադիշչևի «յերազկոտությունը», քան պուշկինյան «պատմականությունը», այնքան վորքան Ռադիշչևի ազատասիրական տիրադներում և «բռնակալության» ուղղած ցասկոտ անեծքներում մենք լսում ենք դյուղացիական տանջանքների արձագանքները և ապագա հեղափոխական փոթորիկների նախագուշակությունները: Բայց խոսել Պուշկինի ինքն իրեն «դավաճանելու» մասին մեղ իրավունք չեն տալիս նաև նրա դատողությունները 30-ական թվականների Ռադիշչևի մասին, յեթե ի հարկե, մենք մեղ համար չենք գծադրել 20-ական թվականների Պուշկինի, վորպես գիտակից «յակորյանի», ֆանտաստիկ պատկերը:

Այն, 30-ական թվականների Պուշկինը նոր սերընդի «առաջնորդ» չեր: Բայց չպետք է մոռանալ, վոր այդ տարիներին նոր սերունդն հենց նոր միայն հա-



սուհանում եր: Իսկ մենք Պուշկինի մեծ պատմական արժանիքը համարում ենք այն, վոր իր ստեղծագործական ամբողջ գործունեյությամբ նա «յեվրոպացի» եր, «լուսավորության» սկզբունքների մուսնետիկ:

## VIII

Պուշկինի սոցիալ-քաղաքական հայացքների շարժման մեր ըմբռնման լույսի տակ մենք իմաստավորում ենք նաև Պուշկինի, վորպես գեղարվեստագետի, զարգացումը: «Յեվրոպացի» իր հայացքներով և իր գեղարվեստական պրակտիկայով, Պուշկինը վորպես գեղարվեստագետ անցնում է յերեք ստադիա: Մեր սխեման, ինչպես և ամեն մի սխեմա, ի հարկե, կոպիտ է և ամբողջ կոնկրետությամբ չի արտահայտում պուշկինյան ստեղծագործության եվոլյուցիայի բարդ պրոցեսը: Նա ժամանակագրական մշակվածության հավակնութունն չունի. ստադիաները միմյանցից անջատված չեն: Բայց մենք յինթադրում ենք, վոր նրա մեջ գծված են Պուշկինի գեղարվեստական «հանճարի» զարգացման հիմնական տենդենցները և վոր նա մեզ տալիս է միասնական Պուշկինին, միասնական իր հակասական շարժման մեջ, չանջատված մտածող և արվեստագետ Պուշկինների:

Պատանի Պուշկինը, մինչ-«բայրոնական» պոեմների Պուշկինն ամբողջովին XVIII դարումն է՝ յեվրոպական և ռուսական, վոլտերի «բանականությամբ», 1789 թ. նախորդակի «լուսավորության» բանականությամբ, նախահեղափոխական Ֆրանսիական գեղոնիգմով: Նա վերացական է, «համամարդկային», «պարտականության», «ազատության» նրա ըմբռնը-



ման մեջ կոնկրետութիւն չկա: Նա բացառապէս «բանաստեղծ» է, իր վոտանաւորներէ նաև ժանրերով, հնչականութեամբ նա ամբողջովին շաղկապված է XVIII դ. հետ:

Թափառման տարիների Պուշկինը ուսմանտիկ է, անհատի բուռն ձգտումների յիրգիչ, վոր բայրօնական պաթոսով արտացոլել է մի շարք լեզուական ժողովուրդների, չորանց թվում և ուսս ժողովրդի, շարժումը դեպի ազգային ազատագրութիւնը: Բուրժուական ազատագրական շարժման նոր ակիքը բարձրացավ և փշրվեց ուստավրացիայի դարաշրջանում, վախենալով Կոնվենտի և տերորի սարսեցուցիչ, — արդին նաև բուրժուական համար, — որերի կրկնվելուց: Այդ «վախը» ուսական խմբագրութեամբ՝ գյուղացիական «բունտի» վախը՝ վորպէս ժանր բեռ նըստեց նաև Սենատի հրապարակի հերոսների կամքի վրա: Այս շրջանի Պուշկինն ամբողջովին շարժման մեջ է, հակասական ձգտումներում՝ վերացականից դեպի կոնկրետը, դեպի «ազգայինը», ամբողջովին՝ բանաստեղծի իսկական կոչման վորոնումներում: Իեկարրիստների շարժման ջախջախումը, վոր նրա ձախ թևում հեղափոխական էր թե ծրագրով և թե տակտիկայով, միայն ուժեղացրեց Պուշկինի «ուսմանտիկական» տրամագրութիւնները, վոր նրան մոտեցրին ուստավրացիայի դարաշրջանի ֆրանսիական ուսմանտիկների հետ:

Պուշկինի շարժումը դեպի ուստավրացիայի և հուլիսյան միապետութեան դարաշրջանի ֆրանսիական բուրժուական լիբերալիզմի աշխարհայացքը վոչ միայն ճշտեց նրա հեղափոխականութեան «աստիճանը



(1789 թ. առանց 1793 թվի), այլ և ձեռակերպեց իրականության նրա պատմական ճանաչողությունը վորոշեց նրա հավատը դեպի բուրժուական սրբագրեսը, ուժեղացրեց ռեալիստական տենդենցները Պուշկինի ստեղծագործության մեջ: Պուշկինի «պատմականությունը» միաժամանակ շարժում է շափածոյից դեպի «արձակը», «Բորիս Գոգոլենովի», «Պոլտավայի», «պատմականության» միջոցով շարժումը դեպի կենցաղական վեպի («Русский Пелаг») չիրականացված մտահղացումը, դեպի պատմական պատմվածքները, դեպի «Պիկովայա դամա»-ն, դեպի «Բելգինի պատմվածքները», «Պուզաչևի պատմությունը»:

Իսկևս «Յեվգենի Ունգլին»-ում բռնելով ուսուսական իրականության ռեալիստական պատկերացման ուղին, Պուշկինը Պետրոսի մասին դրած պոեմներում և պատմվածքներում («Պոլտավա», «Պընձյա հեծյալը», «Պետրոս մեծի արապը») պատմության նյութի հիման վրա վողջունում է բուրժուական Ռուսաստանի դոյացումը: «Բուբրովսկի» և «Կապլիտանի աղջիկը» պատմական պատմվածքներում բուրժուական դասակարգային համաձայնողականության ուղղությամբ նա փորձում է դժել գյուղացիական հարցի «խաղաղ» լուծումը: «Ժլատ ասպետում», «Պատկերներ ասպետական ժամանակներից»-ում Պուշկինը վերադառնում արվեստագետ, խիստ պատմական որչեպիօրության գույներով պատկերացրեց ֆեոդալիզմից դեպի բուրժուական հասարակականությանն անցնելու համայնվորպական բեկման դարաշրջանը: Վորպես այդ մեծ սոցիալ-տնտեսական և կուլտուրական տեղաշարժի պատկերող, Պուշկինը կարողացավ հասնել այնպիսի բարձ-



բության, վոր բուրժուական «ուսալորության» հաղթանակի ճանաչումը կապիտալիզմի շատագոյությունը չզարձալ: Ի դեմս նրա փողի իշխանությունը գտավ խիստ քննադատի: «Ժլատ ասպետի» բարոնի, «Պիկի աղջկա» Գերմանի ախարով, իր դատողություններով Անգլիայի բանվոր դասակարգի դրության մասին, ամերիկական «դեմոկրատիայի» քննադատությամբ («Ջոն Տեներում»), սոցիալական «ոռմանտիկ» Պուշկինը ճանաչեցում է մեր դարաշրջանին, կապիտալիստական «քաղաքակրթության» վոչնչացման դարաշրջանին:

Անավարտ «Գորշուխին գյուղի պատմության» մեջ Պուշկինը հանդիսացավ ուսուցիչության պատմական ճակատադրի հեղափոխական-դեմոկրատական և նարոգնիկական պատկերացման նախակարգետը: Պուշկինի, վորպես արվեստագետի և մտածողի, հասունացման հետ միասին ուսական իրականությունը լայն հոսանքով մտնում է նրա անսագաշտը:

Իրականության պատկերացման մեջ հասուն Պուշկինը հասնում է այն կոնկրետության, վորը ուսական բուրժուական ոեալիզմի սկիզբն է դնում: Ռեստավրացիայի և հուլիսյան միապետության դարաշրջանի ոռմանատիզմի տրամադրություններում այդ առաջընթացը գեպի ոեալիզմը նա մենակ չկատարեց: Բալզակն եւ Ֆրանսիստում իր յերիտասարդ հասակի ոռմանտիկական յերկերից, վորոնք իրականությունն իդեալականացնում էին, հասնում է «Մարդկային կոմեդիայի» ոեալիզմին:

Իր պատմականության մեջ Պուշկինը յեվրոպացի



ե, վոր Վարտեր Սկոտտի հետ ընթանում ե կողք կողքի, բայց ուսական պատմական անցյալի պատկերացման մեջ Պուշկինն ավելի ռեալիստական ե, քան Վ. Սկոտտը, ավելի «պրոպագանդի», քան Վ. Հյուգոն իր «Փարիզի աստվածամոր տաճարով» և անհամեմատ ավելի քիչ ռոմանտիկ, քան Ա. դե Վինյին:

Պուշկինյան պատմականությունը, պուշկինյան արձակն ավելի ե մոտ ռեստավրացիայի դարաշրջանի ֆրանսիական սլատմաբանների բուրժուական սոցիոլոգիզմին, քան արևմտայեվրոպական սլատմաբան — վիպասաններին, վորոնք իրենց ամբողջ ստեղծագործութեամբ կամ նրա սկզբնական ետապներով կապված են ռոմանտիզմին:

Ռուս գրական լեզվի պատմութեան մեջ Պուշկինն որդանապես մտնում ե վորպես դեպի «ազգային» լեզուն և ազգային կուլտուրան, — նրանց բուրժուական ըմբռնողութեամբ, — յեղած տենդենցների արտահայտիչ:

XIX դ. առաջին քառորդում լեզվի համար մղված պայքարին մասնակցում եյին վոչ միայն արդամասականներն ու շիշկովականները, վորոնք մնացին «ժողովրդի» լեզվի համար տարվող բացառապես ազնվական պայքարի սահմաններում: Բայց լեզվի համար տարվող պայքարում կային և բուրժուական տեղենցների ներկայացուցիչները: Արդեն Պուշկինի կրիտիկն տված բարձր գնահատականն ասում ե այն, վոր Պուշկինը դուրս եր յեկել «ազնվական լեզվական կուլտուրայի» սահմաններից, կրիտիկ լեզուն կողմնորոշված ե «միջին և մանր բուրժուադիայի քաղաքային լեզվի և՛ խմբակալին ու պրոֆեսիոնալ առանձնա-



հատկութիւններն ի վրայ: Պուշկինը վոչ միայն միացրեց շիշկովականների և կարամզինականների հակասական տենդենցները նրանց դրական նվաճումներով, այլ նա վորպես անկասկածելի հաջորդ կապված է նաև զեպի «ազգային» լեզուն լեզած ձգտումներին, վոր արտահայտվեցին «Ազատ ընկերութեան» ձախ անդամների գործունեութեան մեջ նրա գոյութեան առաջին տարիներում:

Իսկ «արձակի» լեզվի նկատմամբ Պուշկինի սկզբունքային պահանջներն ամբողջովին պրոգրեսիվ են. «Ճշտութուն և հակիրճութուն—ահա արձակի առաջին արժեքները: Նա պահանջում է մտքեր և մտքեր—առանց դրանց փայլուն արտահայտութեանները վոչ մի բանի չեն ծառայում»: Պուշկինի այդ լոզունգը համահնչյուն է Ստենդալի «Նապոլեոնի կողքսի» ընթերցանութեանը՝ իր լեզուն ու վոճը մշակելուն պատակով: Պուշկինը հրաշալի հասկանում էր, վոր ազգային լեզու ստեղծելու համար «աղնվական լեզվական կուլտուրան» սպառիչ նախադրյալներ տալ չեր կարող, վորովհետև նա բովանդակութեամբ չափազանց աղքատ է, գուրկ է «մտքերից»: Կարծես կրկնելով «Ազատ ընկերութեան» անդամների գանգատները ուս պիտական լեզվի աղքատութեանից, Պուշկինն 1824 թ. գրում է. «Իարի լուսավորութեանը պահանջում է խորհրդածութեան կարևոր նյութեր վորպես սնունդ մտքերի, վորոնք արդեն յերևակայութեան և հարմոնիայի փայլուն խաղերով չեն կարող բավարարվել, բայց պիտանականութեանը, քաղաքականութեանը և փիլիսոփայութեանը դեռևս ուսսերին չեն խոսել: [Մետաֆիզիկական լեզուն] մեր



պրողան գեռես ախնքան քիչ ե մշակված, վոր նույնիսկ հասարակ գրագրութեան մեջ ամենատոգորական հասկացողութեաններ բացատրելու համար մենք ստիպված ենք ստեղծել խոսքի դարձվածքներ, և մեր ծուլութեանն ավելի հոժարութեամբ արտահայտվում ե ոտարի լեզվով, վորի մեխանիկական ձևերը վարդուց արգեն պատրաստ են և բոլորին հայտնի են»։ Նաև 1825 թ. Վյազեմսկուն գրած նամակում Պուշկինը յերազում ե. «սա աստված, վոր նա [ուռս մեռաֆիզիկական լեզուն] յերբևիցե կազմվի նման ֆրանսերենին (արձակի, այսինքն՝ մտքերի պարզ ճիշտ լեզվի)»։

Հենց այս դրույթների լույսով ել մենք կարող ենք ժառանգել Պուշկինին ամբողջութեամբ։ Ուսանելութեան տեսակետից նա մեզ համար ավելի ե արժեքավոր, քան նրա շատ ժամանակակիցները, յովբոպական արվեստագետները։ Նա զերծ ե 1848 թ. նախորդակի արևմտայնիլրոպական բուրժուազիայի տարակուսանքներից և տատանումներից։ Նրա առաջընթացում դեպի «ազգայնութեանը», դեպի «նալիլը տատանումներ չկան։ Յեվ մենք մեր «ազգային» գրականութեան, մեր «ազգային» լեզվի ստեղծման պրոցեսում համարձակ կարող ենք քննադատորեն յուրացնել նրան։

Կյանքի պուշկինյան ըմբռնման մեջ կա ինչ վոր հարադատ, մոտիկ Վերածնութեան արվեստագետների կյանքի պաթոսին։ Մտքի անխոնջ աշխատանքով



լուծելով իրականութեան հակասութեանները, Պուշկինը բերկրանքով ընդառաջում եր նոր կյանքին:

Լինելով անցյալի կուլտուրայի լիիշխան ժառանգք, նա իր կյանքում և իր ստեղծագործութեան մեջ նոր ժամանակվա մարդ եր, նրա դրական հումանիստական տեղեկեցիների արտահայտիչը, ազատագրվող բանականութեան, ազատագրվող մտքի մոնետիկը:

XIX դ. հարուստ ուս գրականութեանը չգիտե վոչ մի գրողի, վորը Պուշկինի նման բերկրութեամբ, հեշտութեամբ ընդուներ կյանքը: Պուշկինի բանաստեղծական ժառանգութեանն ազատ ե մաշող սկեպսիսից, միստիցիզմից,—բուրժուական վախեցած մըտքի այդ ուղեկիցներից: Պուշկինյան հումանիզմում թարմ են, վառ Վերածնութեան այգալույսի գույները: Իմաստուն չեվրոպացի Պուշկինին այդ թարմութեանը տվել ե նրա մոտիկութեանը մեծագույն ստեղծագործական հնարավորութեանների աղբյուրին, նրա մոտիկութեանը «ժողովրդին», նրա տանջանքներին և ուրախութեաններին: Թեև Պուշկինը ժողովրդական մասսաների ազատագրութեան ճիշտ ուղիները ցույց տալ չկարողացավ, բայց նա այդ ազատագրութեան անհրաժեշտութեանն հավատում եր և ժողովրդի ազատութեան միտքը նրա կյանքի գործներ: Պուշկինի ժամանակակիցը, ինքը խոշոր արվեստագետ, Կ. Բրյուլովը նրա մասին ասել ե. «Վորքան յերջանիկ ե Պուշկինը: Այնպե՛ս ե ծիծաղում, կարծես աղիքները յերևում են»:

Վ. Ի. Լենինը սիրում եր Պուշկինին նրա պայծառութեան և պարզութեան համար, նրան բարձր եր



դնահառում այն բանի համար, վոր նա հիանալի կարողանում եր տալ մեծ զգացմունքները՝ սերը, ասելությունը, կարոտը, փառասիրությունը, ստեղծագործության տանջանքները, ազատության խոջանքը, պայքարը հոսանքի դեմ:

Պուշկինի բնության բարոյական ամբողջականությունը, նրա ծիծաղը, մարդկային զգացմունքների խորությունը, իրականության պատկերացման մեջ «մերկ պարզությունը» մոտ են և սիրելի մեր ժամանակի համար, համահնչյուն են մեր կուլտուրայի շինարարության տոնին: Միլիոնավոր աշխատավորներից յուրաքանչյուրի համար միայն պրոլետարական հեղափոխության որվանից հնարավոր յեղավ իր մեջ «մարդուն» գիտակցելը: Յեւ Պուշկինին կարգացող յուրաքանչյուր բանվոր, յուրաքանչյուր գյուղացի-կոլտնտեսական, խորհրդների յերկրի յուրաքանչյուր քաղաքացի նրա հետ միասին համարձակ և ուրախ կարող ե ասել:


Կեցցեն մուսաները, կեցցե՛ բանականությունը:

Կեցցե՛ արևը, թե՛ղ կորչի խավարը:

Վորովհետև մարդկության իսկական պատմության արշալույսին ազատության արևը թանգ է միայն ազատագրված աշխատավորների համար, և միայն նրանք են բանականության կրողները և մեծ զգացմունքների ու հերոսական գործերի արվեստ ստեղծողները:



Գառ. խմբագիր՝ Գ. Լազարյան  
Տեխ. խմբագիր՝ Լ. Ռնանյան  
Սրբադրիչ՝ Ս. Շահբազյան



2403

Արթուր, 1990

Գառվեր № 145, Հրատարակչ. 3989  
Տիրում 2000

Յերևան, Գեորգյանի տպարան, II

ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ. 16



FL0040501



